# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

37ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 43 (1843) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 18, 2017
VOLUME 37, NO. 43 (1843) SATURDAY, NOVEMBER 18, 2017

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Հարկային Օրէնք՝ Հարուստներու Համար

Երկար սպասումէ ետք Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը հրապարակեց հարկային նոր օրէնսդրութեան իր ծրագիրը, գործադրութեան դնելու համար նախագահ Թրամփի նախընտրական խոստումներէն մէկը:

Հրապարակուած նոր ծրագիրը կը ներկայացուի որպէս բարեփոխում եւ կը յաւակնի հարկային բեռը թեթեւցնել միջին խաւի վրայէն: Սակայն, շատ մը տնտեսագէտներու կարծիքով, ծրագրին մէջ ներառուած դրոյթներէն ամենէն աւելի օգտուողները պիտի ըլլան հարուստներն ու մեծ ընկերութիւնները, որոնք այժմու 39 տոկոսի փոխարէն պիտի վճարեն միայն 20 տոկոս: Նոյն տնտեսագէտներու կարծիքով, միջին խաւին հասնելիք օգուտը մեծ հարցականի տակ է: Ճիշդ է որ ոմանք աւելի նուազ պիտի վճարեն՝ քան ներկայիս, սակայն ժողովուրդի մէկ որոշ տոկոսը պիտի ստիպուի հարկային յաւելեալ վճարումներ կատարել:

Հարկային նոր օրէնսդրութեան հեղինակը Հանրապետական մեծամասնութիւնն է, որ առանց նկատի առնելու Դեմոկրատ կուսակցութեան կարծիքը, յառաջիկայ օրերուն պիտի փորձէ օրէնքը վաւերացնել Գոնկրէսի երկու պալատներէն ներս ու նոր տարիէն առաջ զայն դնել նախագահի սեղանին:

Օրինագիծի ամենէն զարմանալի ու վտանգաւոր հետեւանքներէն մին պիտի ըլլայ այն, որ Ամերիկայի ազգային պարտքը պիտի աւելնայ 1.5 դրիլիոն տոլարով, այսինքն՝ 1500 միլիառ տոլարով, անցնելու համար 20 դրիլիոնի սահմանը: Այս պարագան զարմանալի է երբ նկատի ունենանք, որ նախագահ Օպամայի օրով, Հանրապետականները զինք անխնայ կը մեղադրէին, կը բողոքէին ու մեծ աղմուկ կը հանէին, ազգային պարտքի հարցով, նոյնիսկ երկու անգամ փակելով ամբողջ կառավարութեան գործունէութիւնը ու մեծ վնաս հասցնելով երկրի տնտեսութեան: Այժմ որ, Սպիտակ Տան մէջ կը գտնուի Հանրապետական նախագահ մը, ազգային պարտքը դարձած է երկրորդական մտահոգութիւն եւ պատրաստ են մեծագումար պարտքի տակ մտցնելու երկիրը, պարզապէս իրենց մեծահարուստ հովանաւորներուն գրպանը աւելիով լեցնելու համար:

Հանրային կարծիքի վերջին հարցախոյզերուն համաձայն, Ամերիկացի ժողովուրդի միայն 25 տոկոսը համամիտ է նոր օրինագիծին, աւելին՝ միայն 16 տոկոսը կը հաւատայ, որ անձնապէս պիտի օգտուի այդ օրէնքէն:

Ժամանակն է որ, Հանրապետականները դադրին ծառայելէ միայն հարուստ խաւին ու սկսին մտածել ամբողջ ժողովուրդի մասին:

**«ՄԱՍԻՍ»**

## Հայաստանի Պաշտպանութեան Նախարար Վիգէն Սարգսեան Այցելեց Լոս Անճելըս



Հայաստանի պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան ելոյթ կ'ունենայ ԱՄՆ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն ներս

*Նոյեմբեր 13-ին Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան կարճատեւ այցելութեամբ այցելեց Լոս Անճելըս: Երեկոյեան նախարարը հիւրընկալուեցաւ ԱՄՆ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն ներս, ուր Հայկական կազմակերպութիւններու ղեկավարներու եւ համայնքային գործիչներու հետ հանդիպումէն ետք Վիգէն Սարգսեան, համայնքի մեծաթիւ ներկայացուցիչներու առջեւ հանդէս եկաւ ծաւալուն ելոյթով, որու ընթացքին ան անդրադարձաւ հայկական բանակի արդիականացման ծրագիրներուն: Պաշտպանութեան նախարարը, մասնաւորապէս, խօսեցաւ բանակի մարտունակութեան եւ զինուորական ծառայութեան գրաւչութեան բարձրացման, ռազմարդիւնաբերութեան զարգացման, ռազմակրթական ծրագիրներու բովանդակային փոփոխութիւններու, գիտելիքահենք բանակի ձեւաւորման անհրաժեշտութեան եւ շարք մը այլ խնդիրներու մասին:*

*Այցի ծիրէն ներս ՀՀ պաշտպանութեան նախարարը այցելեց Լոս Անճելոսի Քալիֆորնիայի համալսարան:*

*Աշխարհի լաւագոյն համալսարաններու շարքին դասուող կրթօ-*

Շար.ը էջ 5

## Իսրայէլի Մէջ Քրէական Հետաքննութիւն Սկսած Են Հայկական Դիրքեու Վրայ Անօդաչուներով Յարձակման Մէջ Կասկածուող Ընկերութեան Դէմ

*Իսրայէլի ոստիկանութիւնը քրէական հետաքննութեան սկսած է անօդաչու թռչող սարք արտադրող այն իսրայէլական ընկերութեան դէմ, որուն արտադրանքի միջոցով Ատրպէյճան ԱԹՍ փորձարկման ժամանակ փորձած էր ռմբակոծել հայկական դիրքերը:*

*Ոստիկանութեան յայտարարութեան մէջ կ'ըսուի. «Aeronautics Defense Systems Ltd. ընկերութեան նկատմամբ հետաքննութիւն կ'ընթանայ՝ յայտնի գնորդի հետ կատարուած գործարքի ծիրէն ներս»:*

*Հետաքննութիւնը կը վարէ Իսրայէլի ոստիկանութեան Միջազգային յանցագործութիւններու հետաքննութեան միութիւնը: Գործընթաց սկսելու մասին տեղեկութիւնները յայտնի դարձած են Նոյեմբեր 13-ին, երբ իսրայէլական դատարանը թոյլատրած էր հետաքննութիւն իրականացնել՝ սահմանափակելով տեղեկատուութեան տրամադրումը այս ուղղութեամբ: Ոստիկանութիւնը, մասնաւորապէս, յայտնած է, որ պիտի*

Շար.ը էջ 4

## «Իրանի Հետ Մեր Լաւ Յարաբերութիւնները Խոչընդոտ Չեն Իսրայէլի Հետ Մեր Յարաբերութիւններուն». Նալպանտեան

*Իսրայէլական «i24 news» հեռուստաալիքին տուած հարցազրոյցին ժամանակ ՀՀ արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան խօսած է Իրանի եւ Իսրայէլի հետ Հայաստանի յարաբերութիւններու մասին:*

*Լրագրողի հարցին, թէ ինչպէ՞ս կը գնահատէ Իրանի դերը Մերձաւոր Արեւելքի եւ տարածաշրջանի մէջ, Նալպանտեան պատասխանած է. «Մենք ունենք լաւ յարաբերութիւններ հարեւան Իրանի հետ, համագործակցում ենք տարբեր ոլորտներում: Հաշուի առէք, որ միւս երկու հարեւան երկրների՝ Թուրքիայի եւ Ատրպէյճանի հետ ունենք փակ սահմաններ: Իրանը, Վրաստանը այն երկու հարեւաններն են, որոնց հետ մենք ունենք ոչ միայն բնականոն յարաբերութիւններ, այլ նաեւ լաւ համագործակցութիւն: Եւ մենք ջանքեր ենք գործադրում մեր երկկողմ փոխգործակցութիւնն ու գործընկերութիւնը զարգացնելու ուղղութեամբ»:*

*Իսկ այդ մէկը չի՞ խոչընդոտեր հայ-իսրայէլեան յարաբերութիւններուն, հարցին ալ արձագանգած է. «Ես չեմ կարծում, որ դա խոչընդոտ է Իսրայէլի հետ մեր երկկողմ յարաբերութիւններում, ինչպէս որ խոչընդոտ չեն Իսրայէլի յարաբերութիւնները Հայաստանի հարեւան որեւէ երկրի հետ»:*

*Ինչ կը վերաբերի այն բանին, որ Իսրայէլի մէջ չկայ Հայաստանի դեսպան, Հայաստանի ԱԳ նախարարը նշած է. «Մեր կարծիքը շատ յստակ է. Իսրայէլի կողմից Հայաստանում դեսպանութիւն բացելուն պէս, մենք փոխադարձութեան սկզբունքով դեսպանութիւն կը բացենք Իսրայէլում»:*

*Յայտնենք որ, Հայաստանի մէջ կարգ մը քաղաքական մեկնաբաններ կարծիք կը յայտնեն, որ նախարար Նալպանտեանի Իսրայէլ կատարած այցելութիւնը կրնայ վնասել Հայաստան-Իրան յարաբերութիւններուն:*

## ԱՐՏԵՐԿԻՐ ԱՊՐՈՂ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

2018 Մայիսին Լիբանանի մէջ տեղի պիտի ունենան խորհրդարանական ընտրութիւններ:
Համաձայն խորհրդարանի նոր օրէնքին, արտերկիր ապրող լիբանանցիներուն իրաւունք պիտի տրուի իրենց բնակած երկիրներուն մէջ մասնակցելու այդ ընտրութիւններուն:
Հետեւաբար, կոչ կ'ուղղենք արտերկիր ապրող լիբանանահայերուն՝ առցանց արձանագրուելու հետեւեալ կայքէջ մուտք գործելով.
www.diasporavote.mfa.gov.lb
Արձանագրութեան ժամկէտը կ'աւարտի 20 Նոյեմբեր 2017-ին

**Ս.Դ.Հ.Կ. Ընտրական Կեդրոնական Գրասենեակ**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Հարուստների Աներեւակայելի Նամակը Հայաստանում

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

*«Ուաշինգտոն Փոստը» գրում է մօտ 400 հարուստ ամերիկացիների՝ միլիոնատէրերի եւ միլիարդատէրերի նամակի մասին, որ նրանք յղել են ԱՄՆ Կոնգրես: Նամակում նրանք խնդրում են Կոնգրեսին չիջեցնել հարուստների հարկերը: Նամակը ստորագրել են այնպիսի յայտնի ազգանուններ, ինչպիսիք են Սորոսը, Ռոքֆելերը: Նամակի հեղինակները ոչ միայն անհրաժեշտ են համարում չիջեցնել հարկերը հարուստների համար՝ երկրում հաստատուած անհաւասարութեան պայմաններում դա համարելով սխալ, այլ նոյնիսկ կոչ են անում բարձրացնել հարուստների վճարած հարկերը: Հարկերի նուազեցումը ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի նախընտրական խոստումներից էր:*

*Կա՞յ արդեօ՞ք 400 հարուստ ամերիկացիների այդ նամակի տողատակում ներքաղաքական որեւէ շարժառիթ՝ կապուած Թրամփի ֆիգուրի, դրա շուրջ ստեղծուած յայտնի իրավիճակի, ընդհանրապէս նրա նախագահութեան այսպէս ասած ոչ միարժէք պատմութեան հետ, թէ՞ ոչ, իհարկէ դժուար է ասել: Սակայն անգամ այդպիսի շարժառիթի պայմաններում, փաստօրէն, ականատես ենք լինում մի գործողութեան, որի մօտաւոր կրկնութիւնը Հայաստանում անգամ պատկերացնելը, նոյնիսկ քաղաքական կամ ներքաղաքական որեւէ շարժառիթի առկայութեան պայմաններում, գրեթէ անհնար է: Եթէ որեւէ մէկը տեղեկութիւն տարածի, որ Հայաստանի ոչ թէ 400, այլ թէկուզ 40, կամ նոյնիսկ 4 ամենահարուստները դիմել են խորհրդարանին կամ նախագահին՝ իրենցից գանձուող հարկերը աւելացնելու համար, ապա դա լաւագոյն դէպքում կ՚ընկալուի իբրեւ ապրիլմէկեան կատակ:*

*Հայաստանում իհարկէ խօսք չի գնացել նաեւ հարուստների հարկերը իջեցնելու մասին, թէ խորհրդարանի, թէ նախագահի ընտրութեանը չեն տրուել այդպիսի խոստումներ, բայց փոխարէնը Հայաստանում, օրինակ, տարիներ շարունակ խօսք է գնում ասենք՝ շքեղութեան հարկի մասին, սակայն իշխանութիւնը փորձում է բերել հնարաւոր ու անհնար ցանկացած փաստարկ հանրութեան հարցերից խուսափելու համար, այսպէս ասած՝ հիմնաւորելով, թէ ինչու Հայաստանում հնարաւոր չէ գանձել շքեղութեան հարկ: Իսկ հասարակութիւնը իհարկէ գիտէ, թէ ինչու: Հնարաւոր չէ, որովհետեւ այդ նոյն իշխանութիւնը ապրում է շքեղ դղեակներում եւ շրջում շքեղ ինքնաշարժերով, հանգստանում շքեղ հանգստավայրերում, շքեղ հագնւում եւ այլն, եւ այլն: Փոխարէնը, նոյն այդ իշխանութիւնը պատրաստւում է Յունուարի 1-ից բարձրացնել փոքր ու միջին ձեռնարկատէրերի հարկային պարտաւորութիւնները, որ սահմանուած է Հարկային նոր օրէնսգրքով, հիմնաւորելով դա նրանով, որ միջազգային վարկատու կազմակերպութիւնները Հայաստանին այլեւս վարկ չեն տայ, եթէ իշխանութիւնը ցոյց չտայ, թէ ինչ ճանապարհով է ապահովելու դրա վերադարձելիութիւնը:*

*Իսկ վերադարձելիութիւնն ապահովւում է հարկային բեռը բարձրացնելով, բայց ոչ թէ հարուստների համար, այլ՝ բոլորի:*

*Եւ եթէ նոյնիսկ այդ դէպքում բեռը բարձրանում է հարուստների համար, միեւնոյն է, ակնյայտ է դառնում, որ այդ պարագայում փոքր ու միջին ձեռնարկատէրերը յայտնւում են էլ աւելի խնդրահարոյց եւ անմրցունակ վիճակում, որովհետեւ խոշորները ունեն հարկային բեռի բարձրացմանը դիմագրաւելու առաւել մեծ ռեսուրսներ, ի տարբերութիւն փոքր ու միջին բիզնեսի: Դա նշանակում է, որ Հայաստանում էլ աւելի է խորանալու անհաւասարութիւնը, բեւեռացուածութիւնը, կամ այլ կերպ ասած՝ հարուստներն աւելի են հարստանալու, իսկ աղքատները, եթէ անգամ աւելի չաղքատանան, ապա գոնէ դառնալու են աւելի անմրցունակ, միանգամայն «օրինական» կերպով իրենց տեղը զիջելով մի քանի խոշորների, որոնց դէմ մրցակցելը կը լինի օբիեկտիւօրէն անհնար, եւ որոնք միայն կարող են այսպէս ասած սահմանել, թէ որ ոլորտները եւ ինչ սահմանում են թողնում փոքր ու միջին գործարարութեամբ զբաղուողներին:*

*Այդ ամէնով հանդերձ, Հայաստանում խորհրդարանին ամենահարուստների նամակը ուղղակի աներեւակայելի է մէկ այլ շատ պարզ պատճառով՝ խորհրդարանը, ըստ էութեան, հենց այդ հարուստներն են, որոնք կազմում են այնտեղ «փաստաթղթերով ամէն ինչ կարգին» մեծամասնութիւնը:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

**Հայաստանում հնարաւոր չէ գանձել շքեղութեան հարկ: Իսկ հասարակութիւնը իհարկէ գիտէ, թէ ինչու: Հնարաւոր չէ, որովհետեւ այդ նոյն իշխանութիւնը ապրում է շքեղ դղեակներում եւ շրջում շքեղ ինքնաշարժերով, հանգստանում շքեղ հանգստավայրերում, շքեղ հագնւում եւ այլն, եւ այլն**


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**


# Ուսանողական Շարժումն Ու Իշխանութեան Վախերը

ՀԱՅԿ ԴԱՒԹԵԱՆ

*Տարկետման իրաւունքի համար պայքարող ուսանողների գործունէութիւնը շարժման վերածուելու բոլոր նախադրեալներն ունի: Ուսանողութիւնն այն բացառիկ ուժն է, որից վախենում են աշխարհի բոլոր իշխանութիւնները, եւ Հայաստանի իշխանութիւնը չի կարող բացառութիւն լինել: Վարչապետի արագ արձագանքը դրա առաջին վկայութիւնն էր: Երկրորդ ծիծեռնակը ԱԺ պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերի մշտական յանձնաժողովում օրինագծի երկրորդ ընթերցման համար նախատեսուած քննարկման յետաձգումն էր: Յանձնաժողովի նիստը քուորում չլինելու պատճառով չի կայացել: Ենթադրաբար իշխանութիւնը պէտք է փորձի անել ամէն ինչ, որպէսզի ուսանողական դասադուլները լուրջ շարժման չվերածուեն: Ուստի ենթադրելի է, որ իշխանութիւնն ամէն կերպ փորձելու է փչացնել երիտասարդների շարժումը՝ ասելով, որ այն ուղղորդուած է, հետեւում ոմանց ականջներն են թաքնուած, Բաղրամեան 26-ի, կառավարութեան կամ էլ ընդդիմադիր որոշ ուժերի մատն է խառը այս պատմութեան մէջ: Իրականում, սակայն, կայ ներքին վախ որ յանկարծ այս ջահելները իսկապէս անեն այն, ինչ չկարողացան անել բազմաթիւ քաղաքական ուժեր, բա որ իսկապէս երիտասարդներին յաջողուի դասադուլներով 5000 ուսանողի փողոց դուրս բերել: Դա իսկապէս կը վերածուի սոցիալական շարժման: Իսկ այսպիսի շարժման մոտիւացիա իրականում կայ:*

*Տարկետման վերացման դէմ դուրս եկածներին քննադատողները ընդամէնը մի հակափաստարկ են բերում՝ նրանք չեն ուզում ծառայել հայրենիքին: Նախ պայքարի դուրս եկած երիտասարդներից որեւէ մէկը երբեք չի ասել, որ չի ուզում ծառայել կամ չի գնալու բանակ: Երկրորդ՝ պայքարողների մէջ կան նաեւ բանակում ծառայածներ, աւելին՝ անգամ ապրիլեան պատերազմի մասնակիցներ: Ուստի այս հարցը փակուած է ի սկզբանէ: Եթէ ծառայութիւնը նպաստելու է մասնագիտութեան զարգացմանը, ապա սա կարող է լինել միանգամայն ընդունելի:*

*Բայց Պաշտպանութեան Նախարարի առաջարկած «Պատիւ ունեմ» ծրագիրը բոլորովին այլ բանի մասին է, նախ այս ծրագրով պարտադրւում է մարտական ծառայութիւն, որը չի կարող մասնագիտական լինել. բացի այդ՝ այս դէպքում խօսքը 3 տարուայ ծառայութեան մասին է, ինչը նշանակում է, որ տարկետման դիմաց պետութիւնը աւելացնում է զինծառայութեան ժամկէտը: Տարկետման խնդիրն իրականում շատ աւելի նուրբ է եւ ունի խորքային շերտեր: Իրականում յայտարարելով, թէ բոլորն այսուհետ ծառայելու են, պետութիւնը փորձում է լեգիտիմացնել տարիներ շարունակ չծառայածների ներկայութիւնը իշխանութեան վերին էշելոններում: Այդ ո՞ւմ համար պարզ չէ, որ եթէ տարկետումը իսկապէս վերացուի, ապա պատգամաւորների եւ բարձրաստիճան պաշտօնեաների որդիները անպայման ծառայելու են, բայց ոչ թէ առաջին գծում, ինչպէս սովորական մահկանացուների երեխաները, այլ ՊՆ-ի աշխատասենյակներում, այս կամ այն գնդի տաքուկ անկիւնում, որտեղ երբեք ատրճանակի դիւերսանտը չի յայտնւում: Նրանք դա անելու են կա՛մ իրենց ունեցած հզօր եւ ազդեցիկ կապերով, կա՛մ էլ փողով ու այլ ճանապարհով:*

*Այսինքն՝ նրանք, ովքեր նախկինում տարկէտում էին ստանում, ոչ թէ գիտնական կամ բարձրակարգ մասնագէտ դառնալու, այլ չծառայելու համար, նորից շարունակելու են չծառայել, բայց այս անգամ կեղծ ծառայութեան քողի տակ: Որեւէ մէկը չի հաւատում, որ ծառայութիւն ասուածը բոլորի համար հաւասար է լինելու: Չեն հաւատում, որովհետեւ մարդիկ, ովքեր խօսում են տարկետման իրաւունքի վերացման եւ հայրենիքի նկատմամբ պարտք կատարելու մասին, դասական իմաստով չեն ծառայել բանակում՝ սկսած պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանից, վերջացրած վարչապետի քաջարի օգնականով:*

*Հետեւաբար տարկետում ստացած երիտասարդների այն հատուածը, որն իսկապէս արժանիօրէն վաստակել է այս իրաւունքը, ներքին ըմբոստութիւն է ապրում: Նրանք իրաւունք ունենք այդ հարցը տալու՝ ինչո՞ւ մենք չունենք նախ կրթութիւն ստանալու, ապա միայն բանակում ծառայելու իրաւունք, չէ՞ որ այդ իրաւունքը դուք ունեցել էք:*

*«ՀԱՅԵԼԻ»*


Մասիս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ

ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**

Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**

1060 N. Allen Ave.

Pasadena, CA 91104

Phone: (626) 797-7680

Fax: (626) 797-6863

E:Mail: massis2@earthlink.net

*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly

Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**

USA $50.00, $100.00 (First Class)

Canada $125.00 (Air Mail)

Overseas $250.00 (Air Mail).

All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To **MASSIS WEEKLY**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Ուսանողները Դադրեցուցած են Հացադուլն ու Դասադուլը




Տարկէտման իրաւունքի չեղարկման դէմ պայքարող ուսանողները հաւաքուած են Ազգային ժողովի շէնքին առջեւ

*Տարկէտման իրաւունքի չեղարկման դէմ պայքարող ուսանողները դադրեցուցած են հացադուլը եւ դասադուլը: Այս մասին ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի աշխատասենեակէն ներս տեղի ունեցած քննարկումէն ետք յայտարարած է հացադուլ յայտարարած ուսանողներէն Դաւիթ Պետրոսեանը:*

*Ան տեղեկացուցած է, որ խնդրայարոյց թեմայի շուրջ կլոր սեղան կազմակերպելու իրենց առաջարկը ընդունուած է: Այն տեղի պիտի ունենայ 22 Նոյեմբերին:*

*«Կլոր սեղան գումարելու նպատակը կայանում է նրանում, որ մենք կարողանանք լսելի դարձնել մտահոգութիւն ունեցող բոլոր կողմերի ձայնը: Ընդհանուր քննարկման արդիւնքում կը փորձենք տարկէտման ինստիտուտը սահմանափակող այս օրէնգծում կատարել փոփոխութիւններ: Կարծում ենք, որ կլոր սեղանն այս պարագայում լաւագոյն տարբերակն է, քանի որ մեր նպատակը փոփոխութիւններ իրականացնելն է օրէնքում»,- ըսած է Դաւիթ Պետրոսեանը:*

*Պայքարին մասնակից ուսանողը նշած է, որ պիտի փորձեն կլոր սեղանի ձեւաչափին մէջ ներգրաւել գիտնականները եւ քաղհասարակութեան ներկայացուցիչները: «Սա հնարաւորութիւն է, թէ ինչպէս կ'օգտագործենք այն, կախուած է մեզնից»,- ըսած է ան:*

*Դաւիթ Պետրոսեանը միաժամանակ չեշտած է, որ չի կրնար ըսել՝ ինչ գործողութիւններու պիտի դիմեն յառաջիկայ կլոր սեղանի քննարկումներէն ետք: Ամէն ինչ, ըստ ուսանողի, կախուած կ'ըլլայ քննարկումներու ընթացքէն եւ արդիւնքէն:*

### Զինծառայութեան Մասին Օրինագիծը Ընդունուած է Ամբողջութեամբ

*Հայաստանի Խորհրդարանը 86 կողմ եւ ընդամէնը 6 դէմ ձայներու յարաբերակցութեամբ երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջութեամբ ընդունած է զինծառայութեան մասին վիճայարոյց օրինագիծը:*

*Դէմ քուէարկած են միայն Ազգային ժողովի «Ելք» խմբակցութեան պատգամաւորները: Սակայն ուշագրաւ է, որ ընդդիմադիրներէն որեւէ մէկը ելոյթ չէ ունեցած, միայն «Ելք»էն Արարատ Միրզոեանը կոչ ըրած է իշխող մեծամասնութեան, այդ շարքին՝ ընդդիմադիր «Ծառուկեան» խմբակցութեան, դէմ քուէարկել:*

*Այսպիսով, զինծառայութեան մասին արդէն ընդունուած օրէնքով արմատապէս փոխուած է տարկէտման կարգը. ուսման նպատակով տարկէտումէն կրնան օգտուիլ միայն այն քաղաքացիները, որոնք պայմանագիր կը կնքեն Պաշտպանութեան նախարարութեան հետ՝ պարտաւորուելով ուսումնառութեան ընթացքին ռազմական պատրաստութիւն անցնիլ, իսկ ուսումնառութենէն ետք ծառայել Պաշտպանութեան նախարարութեան նշած վայրին մէջ՝ երեք տարի ժամկէտով: Հակառակ պարագային, 18 տարին լրանալէ ետք երիտասարդները կը զօրակոչուին բանակ՝ երկու տարի ժամկէտով:*

*Օրէնքը խորհրդարան բերած պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանի պնդմամբ, իրենք այս կերպ ընկերային արդարութեան հարց կը լուծեն՝ փակելով ուսում ստանալու անուան տակ բանակէն խուսափելու ճանապարհը:*

### Նախորդ Ուսումնական Շրջանին Հայաստանէն Աւելի Քան 7000 Աշակերտ Հեռացած է

*2016-2017 ուսումնական տարուան ընթացքին Հայաստանէն հեռացած են հանրակրթական դպրոցներու 7117 աշակերտներ, ընդ որում, կէսէն աւելին՝ 4076-ը՝ տղաներ: ՀՀ ԿԳՆ վիճակագրական տուեալներու համաձայն՝ արտահոսքի ամենամեծ տոկոսը բաժին ինկած է մայրաքաղաքին:*

*Երեւանէն հեռացած են 2600 աշակերտներ, Արագածոտնէն՝ 208, Արարատէն՝ 623, Արմաւիրէն՝ 798, Գեղարքունիքէն՝ 517, Լոռիէն՝ 654, Կոտայքէն՝ 707, Շիրակէն՝ 573, Սիւնիքէն՝ 114, Վայոց Ձորէն՝ 81 եւ Տաւուշէն՝ 242 աշակերտներ:*

*2016-2017 ուսումնական տարուն ընթացքին այլ երկիրներէ Հայաստան եկած են 2373 աշակերտներ, որոնցմէ՝ 1113-ը՝ աղջիկներ:*

*Այլ երկիրներէ ժամանած աշակերտներէն 933-ը տեղաւորուած են Երեւանի հանրակրթական դպրոցներու, իսկ մնացեալները շրջաններու մէջ:*

### Գիտութեան Ֆինանսաւորմամբ Տարածաշրջանին Մէջ Հայաստանը Ամենավերջինն է



Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի նախագահ Ռատիկ Մարտիրոսեան

*Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի նախագահը կոչ ըրած է այնպէս ընել, որպէսզի բանակն ու մասնագէտներու պատրաստման համակարգը իրար չհակադրուին:*

*Աւելի քան տասը տարի ակադեմիան գլխաւորող Ռատիկ Մարտիրոսեանը նման կերպ արձագանգած է զինապարտութեան մասին վիճայարոյց օրինագիծի դէմ մօտ մէկ շաբաթ շարունակուող ուսանողներու դասադուլին:*

*«Փրոպլեմը կայանում է հետեւեալում, որ եթէ մենք քննարկում ենք երկու համակարգ. բանակ եւ մասնագէտների պատրաստում, պէտք է այնպէս լինի, որ սրանք իրար չհակադրուեն, որովհետեւ, ըստ իս՝ ութեան, եթէ մենք մասնագէտներ պատրաստելու փոխարէն երիտասարդներին ուղարկում ենք բանակ, թւում է, թէ բանակի հարցը լուծում ենք ի հաշիւ երկրին մասնագէտներ պատրաստելու: Այսպէս պիտի չլինի, որովհետեւ կը ստացուի, որ մենք մի բնագաւառի խնդիրները լուծում ենք միւսի հաշուին»*

*Ռատիկ Մարտիրոսեան ուշագրաւ տուեալներ ներկայացուցած է: Պարզուած է, որ գիտելիքահենք տնտեսութիւն եւ նման տնտեսութեան վրայ խարսխուած պետութեան մասին նախագահ Սերժ Սարգսեանի եւ տարբեր վարչապետներու տարիներ ի վեր հնչեցուցած յայտարարութիւններու ֆոնին. գիտութեան յատկացուող ֆինանսաւորմամբ տարածաշրջանի մէջ Հայաստանը ամենավերջին տեղը կը գրաւէ:*

*ԳԱԱ նախագահի խօսքով, եթէ Հայաստանի իշխանութիւնները գիտութեան յատկացուցած են երկրի ՀՆԱ-ի 0.25 տոկոսը, ապա, օրինակ, Ատրպէյճանը. 0.6 տոկոսը, իսկ Վրաստանը. 0.4 տոկոսը: Ընդ որում, Հայաստանի ՀՆԱ-ն տարածաշրջանի մէջ ամենափոքրն է:*

*«Այս տարածաշրջանում չկայ մի երկիր, որ գիտութեանը տրամադրուած պետական միջոցները մեզանից քիչ լինի», - նշած է Ռատիկ Մարտիրոսեանը:*

### Սարգսեան «Իրականանալի» կը Համարէ Մինչեւ 2040 Թուականը Հայաստանի Բնակչութիւնը 4 Միլիոնի Հասցնելու Նպատակը

*Նախագահ Սերժ Սարգսեան հանրապետութեան ժողովրդագրական խնդիրներուն նուիրուած խորհրդակցութիւն կազմակերպած է, որուն մասնակցած են վարչապետը, փոխվարչապետը, նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի առողջապահութեան եւ ընկերային հարցերու մնայուն յանձնախումբի նախագահը, աշխատանքի եւ ընկերային հարցերու, առողջապահութեան, տարածքային կառավարման եւ զարգացման, գիւղատնտեսութեան, ելեւմտական, տնտեսական զարգացման եւ ներդրումներու, սփիւռքի նախարարները, արտաքին գործոց նախարարի տեղակալը, նախագահի աշխատակազմի պաշտօնեաներ:*

*Խորհրդակցութեան ընթացքին ըստ բնագաւառներու ներկայացուած եւ քննարկուած են Հայաստանի Հանրապետութեան ժողովրդագրական հիմնական խնդիրները եւ իրավիճակի բարելաւման կարելիութիւնները, անդրադարձ կատարուած է պետական քաղաքականութեան թիրախաւորման հիմքը կարեւորուող՝ երկրի ժողովրդագրական իրավիճակին վրայ ազդող հիմնական գործօններուն, առաջնահերթութիւններուն եւ անոնց հիման վրայ իրականացուելիք միջոցառումներուն, ինչպէս նաեւ թիրախային նպատակին հասնելու խթաններուն:*

*Խորհրդակցութեան սկիզբը հանրապետութեան նախագահը ընդգծած է, որ մինչեւ 2040 Հայաստանի բնակչութիւնը 4 միլիոնի հասցնելու համազգային նպատակը դժուար, բայց իրականանալի խնդիր է: Նախագահը յաղթահարելի նկատած է նաեւ ժողովրդագրական իրավիճակին վրայ այսօր բացասաբար ազդող՝ Հայաստանի հետ դրացիներուն ունեցած յարաբերութիւններուն պատճառով առկայ անվտանգութեան խնդիրները:*

*Նախանշուած թիրախային նպատակին հասնիլը, նախագահ Սարգսեանի համոզումով, պէտք է ըլլայ Հայաստանի բոլոր իշխանութիւններուն խնդիրը, եւ 2040-էն ետք ալ ժողովրդագրական իրավիճակի շարունական բարելաւումը պէտք է նոյնչափ կարեւոր նկատուի:*

*Խորհրդակցութեան հիման վրայ հանրապետութեան նախագահը տուած է շարք մը յանձնարարականներ. մասնաւորապէս՝ կառավարութեան յանձնարարուած է մշակել Հայաստանի Հանրապետութեան ժողովրդագրական իրավիճակի (մինչեւ 2040) բարելաւման ռազմավարական հիմնադրոյթները, արտացոլել զանոնք մինչեւ 2030 Հայաստանի զարգացման ռազմավարութեան մէջ՝ սահմանելով համապատասխան բաղադրիչներ եւ 5-ամեայ թիրախներ յետագայ ծրագիրներու մշակման ու իրականացման համար:*

*Ընդգծուած է, որ կառավարութեան կողմէ մշակուող բոլոր ռազմավարական ծրագիրները պէտք է անդրադառնան ժողովրդագրական իրավիճակին՝ հիմք ընդունելով կառավարութեան կողմէ հաստատուած ժողովրդագրական իրավիճակի բարելաւման մինչեւ 2040-ի ռազմավարական հիմնադրոյթներն ու այդ պահուն գործող համապարփակ ռազմավարական ծրագիրի մօտեցումները:*

# ԼՈՒՐԵՐ

## Freedom House. Հայաստանի մէջ Համացանցի Ազատութեան Մակարդակը Վատթարացած է

Հայաստան իր դիրքերը վատթարացուցած է համացանցի ազատութեան «Freedom on the Net 2017» վարկանիշին մէջ, որ հրապարակած է «Freedom House» միջազգային կազմակերպութիւնը:

Հայաստանը մտած է «մասնակի ազատ համացանցով» երկիրներու ցուցակ. ստանալով 100 հնարաւորէն 32 միաւոր:

Զեկոյցի համաձայն, համացանցի մէջ ազատութեան մակարդակը վատթարացած է, երբ Facebook-ի օգտատէրերը ժամանակաւոր սահմանափակումներ ունեցած են: Միւս պատճառն այն է, որ «խորհրդարանական ընտրութիւններու նախաշեմին համացանցի մէջ դիտուած է խարդախութիւններու (մանիփուլացիաներու) աննախադէպ մակարդակ, ըստ որուն, համակարգուած ծրագիրները ապատեղեկատուութիւն տարածած են եւ փորձած են խլացնել Twitter-ի անկախ հաշուետուութիւնը»:

«Հակառակ անոր, որ կառավարութիւնը սովորաբար չի գբաղուիր արգելափակմամբ կամ զտմամբ, Facebook-ը 2016 թուականի յուլիսին սահմանափակուած էր, երբ զինուած ընդդիմադիրները Երեւանի մէջ գրաւած էին ոստիկանական տեղամասը, որու ընթացքին մի քանի ոստիկաններ պատանդ վերցուցած էին: Ընկերային ցանցերու միջոցաւ զօրահաւաքուելով, հազարաւոր քաղաքացիներ փողոց դուրս եկած էին, որ միաժամանակ հանդէս գան ընդդէմ կառավարութեան: Իրաւապահ մարմինները բռնութեամբ հեռացուցած էին իրադարձութիւնները լուսաբանող լրագրողներուն:

Ընդհանուր առմամբ, համացանցը համեմատաբար ազատ եղած է. ենթակառուցուածքի աստիճանական բարելաւմամբ եւ բնակչութեան աւելի լայն շերտերու շրջանին կապի հասանելիութեամբ: Աքթիւիսթները ընկերային մետիան կանոնաւորապէս կ'օգտագործեն որպէս իրենց խնդիրներու առաջմղման գործիք, ընդդիմութիւնը եւ անկախ լրատուամիջոցները համացանցի մէջ աճած են»,- նշուած է զեկոյցին մէջ:

Փորձագէտները անցեալ տարուայ առանցքային իրադարձութիւններու շարքին նշած են այն փաստը, որ «ոստիկանութիւնը նպատակաուղղուած եւ բռնի միջոցներով խոչընդոտած է լրագրողներու աշխատանքը, որոնք յուլիսեան ցոյցերէն ուղիղ հեռարձակումներ կ'իրականացնէին»:

Ինչ կը վերաբերի Հայաստանի հարեւաններուն, զեկոյցի համաձայն, Վրաստանը կը շարունակէ մնալ ազատ համացանցով միակ երկիրը, մինչդեռ Ատրպէյճանը մասնակի ազատ համացանցով երկիրներու ցուցակին մէջ է: Ինչ կը վերաբերի Իրանին եւ Թուրքիոյ, ապա այս երկիրներուն մէջ համացանցը ազատ չէ:

## «Տաշիր Կրուփ»-ը Հայաստանի Մէջ Մէկ Միլիառ Տոլարի Ներդրում Կը Ծրագրէ



Սերժ Սարգսեան Սամուէլ Կարապետեանի, Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի եւ այլոց հետ կը ժամանէ «Տաշիր»-ի ներդրումային ծրագիրի ներկայացման վայրը

Ռուսական «Տաշիր» ընկերութիւններու խումբը Հայաստանի ներդրողներու ակումբի եւ միջազգային ֆինանսական հիմնարկներու հետ համատեղ կը պատրաստուի յառաջիկայ տարիներու ընթացքին մօտ մէկ միլիառ տոլարի ներդրում կատարել Հայաստանի ուժանիւթի ոլորտին մէջ: Այդ մասին յայտարարուած է «Ռետիսըն Պլու» հիւրանոցէն ներս, «Տաշիր»-ի ներդրումային ծրագիրի ներկայացման ժամանակ, որուն ներկայ գտնուած է նաեւ նախագահ Սերժ Սարգսեանը:

Միջոցառման ժամանակ հանգամանօրէն ներկայացուած են, թէ ինչ միջոցներու հաշւոյն եւ ինչպէս պիտի իրականացուի վերոնշեալ ներդրումային ծրագիրը ու որքանով այն իրատեսական է:

Միջոցառման մասնակցած են նաեւ «Տաշիր»-ի գործընկեր միջազգային ֆինանսական եւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ծրագրի ներկայացման աւարտին տեղի ունեցած է փաստաթուղթերու ստորագրման արարողութիւն «Տաշիր» ընկերութեան, «Հայաստանի ելեկտրական ցանցեր» (ՀԷՑ) ընկերութեան եւ ֆինանսական գործընկերներու միջեւ:

Յիշեցնենք, որ ՀԷՑ-ը կը պատկանի ռուսաստանաբնակ միլիառատէր Սամուէլ Կարապետեանի «Տաշիր Կրուփ»-ին:

## Թուրքիան Հայաստանի Հետ Սահմանի Կարսի Հատուածին Տեսախցիկներ Տեղադրած է

Թրքական իշխանութիւնները հայ-թրքական սահմանի Կարսի հատուածին անվտանգութեան տեսախցիկներ տեղադրած են: Կարսի նահանգապետարանի հաղորդագրութեան համաձայն՝ 3 օգոստոսէն տեսախցիկներու տեղադրման աշխատանքները արդէն աւարտած են, իսկ փորձարկման եւ գործարկման գործընթացը դեռ կը շարունակուի:Այս մասին լուրը փոխանցած է «CNN Türk»-ը:

Նախագիծը 2 միլիոն 880 հազար թրքական լիրա արժած է: «Ծրագիրի նպատակն է առաւել անվտանգ դարձնել Թուրքիա - Հայաստան սահմանի Կարսի հատուածը եւ կանխել ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող միջադէպերը», - ըսուած է պաշտօնական յայտարարութեան մէջ:

## Իսրայէլի Մէջ Քրէական Հետաքննութիւն

Շարունակուած էջ 1-էն

չյստակեցնէ, թէ ով է «յայտնի գնորդը»:

Aeronautics Defense Systems ընկերութիւնը յայտարարութիւն տարածած է՝ նշելով, որ իրենք կը պատրաստուին լիակատար աջակցութիւն ցուցաբերել հետաքննութեան եւ «ընել առաւելագոյնը, որպէսզի հետաքննութիւնը հնարաւորինս արագ արդիւնք տայ»:

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան պաշտպանական արտահանման վերահսկման գործակալութիւնը Օգոստոսին Aeronautics Defense Systems ընկերութեան համար կասեցուցած էր Orbiter 1K տեսակի ԱԹՍ-ն «յայտնի գնորդին» արտահանելու արտօնագիրը:

Aeronautics-ի տուեալներով՝ ընկերութիւնը մտադիր էր «յայտնի գնորդին» հետ յառաջիկայ երկու տարուան մէջ կնքելու 20 միլիոն տոլար արժողութեամբ պայմանագիր: Այդ ժամանակ ընկերութեան տարածած հաղորդագրութեան մէջ կ'ըսուէր, որ ԱԹՍ վաճառելու ՊՆ կասեցումը կը վերաբերի միայն «յայտնի գնորդին», իսկ միւս օտարերկրեայ գնորդներուն վրայ անիկա չի տարածուիր:

The Times of Israel-ը կը գրէ, որ թէեւ իսրայէլական կողմը չի յայտներ գնորդին անունը, սակայն յայտարարութիւններէն կարելի է ենթադրել, որ ան Ատրպէյճանն է: Արտօնագրի կասեցումը եղաւ այն դէպքէն երկու շաբաթ անց, երբ նախարարութիւնը բողոք ստացած էր, որ Ատրպէյճանի պահանջով ընկերութիւնը իր Orbiter 1K տեսակի ԱԹՍ-ն Լեռնային Ղարաբաղի մէջ կիրառած է հայկական ուժերուն դէմ:

Յուլիս 7-ի յարձակման ժամանակ վիրաւորուած էր երկու հայ զինուոր:

## Թրքական «Լաւ» Կուսակցութեան Հիմնադիրներուն Մէջ Են Հայ Անդամներ





Թուրքիոյ քաղաքական ասպարէզ յայտնուած նոր. «Լաւ» կուսակցութիւնը, որու հիմնադիրը նախկին պաշտպանութեան նախարար Մերալ Աքշեներն է, լուրջ յայտ ներկայացուցած է յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն խորհրդարան (մէճլիս) մտնելու համար: Շատերը այս կուսակցութեան միանալու նպատակով լքած են «Ազգայնական շարժում» կուսակցութեան շարքերը:

Թրքական լրատուամիջոցներու ուշադրութիւնը վերջին օրերուն կեդրոնացած է այն տեղեկատուութեան վրայ, որ կուսակցութեան հիմնադիր անդամներու շարքին երկու հայ կայ:

Անոնցմէ մէկը «Լաւ» կուսակցութեան հիմնադիր խորհուրդի անդամ Էլմաս Կիրակոսն է: Տեղական լրատուամիջոցներէն մէկուն տուած հարցազրոյցն մէջ ըսած էր. «Ես եկեղեցի կ'երթամ, գիտեմ իմ Աստծուն: Ես հայ եմ եւ երբեք չեմ թաքցներ ինքնութիւնս: Թուրքիոյ քաղաքացի եմ, սակայն ազգութիւնս հայ է»:

Թրքական ԶԼՄ-ները յատկապէս ուշադրութիւն դարձուցած են կուսակցութեան միւս հիմնադիր անդամի հայկական ծագման վրայ, նշելով, որ անոր ազգային պատկանելութիւնը փորձուած է թաքցնել: Համաձայն թրքական ԶԼՄ-ներու հրապարակումներուն, հայկական ծագում ունի կուսակցութեան փոխնախագահ Թայլան Երլտըզը, որ աշխատած է Google-ի մէջ եւ յայտնի է որպէս Google-ի «հանճարեղ զաւակ»: Ան կուսակցութեան տեղեկատուութեան եւ թեխնոլոկիաներու հարցերով պատասխանատուն է:

Յայտնի թուրք կին քաղաքական գործիչ Մերալ Աքշեներ, որ կ'ակնկալուի, որ Թուրքիոյ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն ըլլայ Էրտողանի հիմնական մրցակիցը, 25 հոկտեմբերին ներկայացուցած էր իր հիմնած նոր կուսակցութիւնը, անոր գաղափարախօսութիւնն ու նպատակները:

## Արմէն Մկրտչեան. «Վստահ Եմ, Որ ՍԴՀԿ-ը Այլընտրանք է Դառնալու Այս Համատարած Գորշութեան Մէջ»

*Հարցազրոյց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան քաղաքական դիւանի ներկայացուցիչ Արմէն Մկրտչեանի հետ: ՏԻՄ ընտրութիւններն աւարտուեցին, Հնչակեան կուսակցութիւնը որոշ համայնքներում յայտեր էր ներկայացրել:*



Հ.- Ի՞նչ արդիւնքներ գրանցեցիք:

*Պ.- Հնչակեան կուսակցութիւնը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւններին մասնակցեց երկու թեկնածուով՝ խոշորացուած Անի եւ Կապան համայնքներում: Մեր երկու թեկնածուներից մէկը՝ Ակուն Սաղաթելեանը, իսկապէս տպաւորիչ յաղթանակ տարաւ Անիում եւ 32 թեկնածուների մէջ գրաւեց 3-րդ տեղը: Ինչպէս եւ ինքը յայտարարեց, մեզ համար սա Հնչակեան կուսակցութեան յաղթարշաւի սկիզբն է, որին, վստահ եմ, հետեւելու են բազմաթիւ այլ յաղթանակներ բոլոր մակարդակների ընտրութիւններում: Վստահ ասում եմ, որ ՍԴՀԿ-ը այլընտրանք է դառնալու այս համատարած գորշու- թեան մէջ: Մենք 130-ամեայ կուսակցութեան երիտասարդ թիմ ենք, որի առջեւ կայ մէկ խնդիր՝ մեր գաղափարների, սոցիալական արդարութեան ու հաւասարութեան իրականանալի տես- լականի տակ ձեւաւորել առողջ ու մրցունակ հասարակութիւն, որը կարող է եւ պէտք է տեղի ունենայ ամէնօրեայ քաղաքական պայքարի միջոցով:*

Հ.- Շատ այլ քաղաքական կուսակցութիւններ, որոնք աւելի խոշոր են ՍԴՀԿ-ից, անգամ չմասնակցեցին ՏԻՄ-ի ընտրութիւններին: Ըստ ձեզ, ի՞նչն է պատճառը:

*Պ.- Մեր երկրի քաղաքական ուժերի մօտ կայ մի մտայնութիւն, որն իրեն վաղուց արդէն սպառել է՝ ամէն ինչ, կամ ոչինչ: Կամ ե՛ս եմ նախագահը, կառավարութիւնը, խորհրդարանի մեծամասնութիւնը, կա՛մ էլ տուն եմ գնալու: Կուսակցութիւնը չի կարող եւ չպէտք է էդպիսի մօտեցում ցուցաբերէ: Ցանկացած խոշոր յաղթանակի հիմքը փոքր յաղթանակներն են: Դժգո՞հ է արդեօք մեր ժողովուրդն այսօրուայ ու երէկուայ իշխանութիւններից, կարծում եմ երկու կարծիք լինել չի կարող՝ ի հարկէ դժգոհ է: Ինչո՞ւ է քուէարկում ՀՀԿ-ի օգտին՝ միայն փողը չէ, որ պատճառն է՝ իրական այլընտրանք չի տեսնում: Մեզ անհրաժեշտ է ոչ թէ անձի, այլ գաղափարների, առաջարկուած համակարգի այլընտրանք: Այս վայրի, փողային, ամենակուլ համակարգին Հնչակեան կուսակցութիւնն առաջարկում է մարդակեդրոն, սոցիալապէս արդար, մեկնարկային հաւասար պայմաններ ունեցող համակարգ, որին մենք հաւատում ենք: Մենք հաւատում ենք, որ բանուորի եւ օլիգարխի երեխաները մեր երկրում կարող են եւ պէտք է ունենան մեծ կեանք մտնելու հաւասար պայմաններ: Եւ մեր գաղափարները, դրանց կիրառման կոնկրէտ գործիքակազմը պէտք է տարածենք ողջ Հայաստանով մէկ՝ ամենախոշոր քաղաքներից մինչեւ հեռաւոր գիւղեր:*

*Եթէ չեն ընտրում, ժողովրդից չի կարելի նեղանալ, ուրեմն սխալը քո մէջ է, ժողովուրդը հաւաքական առումով չի սխալւում:*

Հ.- Առաջիկայում ի՞նչ գործողութիւններ է ծրագրում Հնչակեան կուսակցութիւնը: Խօսւում է արտախորհրդարանական ուժերի միութեան մասին:

*Պ.- Մենք չենք հաւատում աւազի վրայ կառուցուած տներին: Նմանատիպ ծրագրերը ականջի համար հաճելի են, սակայն գործնականում ունեն մի քանի ամսուայ կեանք, որովհետեւ գաղափարները շատ տարբեր են: Փետրուար-Մարտ ամիսներին կրկին ՏԻՄ-ի ընտրութիւններ են, մենք պատրաստւում ենք նոր թեկնածուներ առաջադրել ու յաղթել: Ուժեղացնում ենք մեր մասնաճիւղերը, առաջիկայում բացելու ենք նորերը մի քանի քաղաքներում: Սեւագործ ու հետեւողական աշխատանքի ենք գնում: Օփերայում 50 հոգիով հաւաքուելով ու չիրականանալի պահանջներ դնելով տեղ չենք հասնի: Պէտք է ժողովրդին ծանօթացնենք մեր գաղափարների ու ծրագրերի հետ: Ամէն ինչ՝ հերթով:*

Զրոյցը վարեց՝
ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

## Կարօ Փայլան. «Թուրքիոյ Մէջ Կրթութեան Հիմքը Կրօնը Դրուած է»



*Թուրքիոյ խորհրդարանէն ներս կ՚ընթանան 2018 թուականի պիւտճէի նախագիծի քննարկումներ, որոնց ծիրէն ներս 7 Նոյեմբերին ներկայացուած է կրթութեան նախարարութեան համար նախատեսուած պիւտճէն: Քննարկման ժամանակ ելոյթ ունեցած է մեճլիսի պոլսահայ պատգամաւոր Կարօ Փայլանը: Այս մասին գրած է «Ժամանակ»՝* *«Էրմէնի հապէր» կայքը:*

*Թրքական «Demokrathaber» լրատուական կայքի տեղեկացմամբ, Փայլան քննադատած է կրթական համակարգի փոփոխութիւնները:*

*Ան դժգոհած է, որ կրթութեան նախարար Իսմէթ Ըլմազ ելոյթին մէջ ընդհանրապէս չէ անդրադարձած այդ փոփոխութիւններուն: Փայլան անդրադարձած է նաեւ նախարարութեան Թվիթըրեան էջին մէջ եղած գրառումներէն մէկուն «որակեալ կրթութիւն»* (կրթական համակարգի փոփոխութիւններուն մաս կը կազմէ՝ խմբ.) *արտայայտութեանը՝ ընդգծելով, որ այդ կերպ Ըլմազ ինքնըստինքեան թրքական դպրոցներու 90 տոկոսը անորակ համարած է:*

*Պոլսահայ պատգամաւորը քննադատած է Թուրքիոյ կրթական քաղաքականութիւնը՝ նշելով, որ կրթութեան հիմքը կրօնը դրուած է:*

*«Կրօնական կրթութիւնը, հաւատացեալ սերունդ դաստիարակելու նպատակը, որու մասին խօսած է նախագահ Էրտողան, դարձուցեր էք ձեր նախարարութեան գլխաւոր առաքելութիւնը: Մինչդեռ սա ուղղուածութիւններէն մէկը պէտք է ըլլար: Ո՞ւր մնաց գիտական, ժողովրդավարական եւ հաւասար կրթութիւնը»:*

*Նշենք, որ կրթութեան նախարարութեան Twitter-ի էջին կրթական համակարգի փոփոխութիւններու մասին գրառում կատարուած էր՝ դպրոցներու մէկ մասի հասցէին կիրառելով՝ «որակեալ կրթութիւն» արտայայտութիւնը:*

*Քննադատութիւններու տարափի պատճառով գրառումը ջնջած են: Ըլմազ բացատրած է, որ «որակեալ կրթութիւն» արտայայտութիւնը կը վերաբերի դպրոցներուն, որոնք աշակերտ կ՚ընդունին միայն քննութեամբ: Առանց քննութիւն յանձնելու երեխաները կրնան ընդունուիլ տան մօտակայքը գտնուող 5 դպրոցներէն մէկը:*

*Քննադատութիւններուն արձագանգելով, Ըլմազը նշած է. «Մէկին լաւ ըսելով, միւսները վատ չեն դառնար»:*

## Ճեմալ Փաշայի Թոռնիկը Դատապարտուած է Մէկ Տարի Երեք Ամիս Ազատազրկման



*Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչ Ճեմալ փաշայի թոռնիկը՝ Հասան Ճեմալը «ահաբեկչական խմբաւորման քարոզչութիւն» իրականացնելու մեղադրանքով դատապարտուած է 1 տարի եւ 3 ամիս ազատազրկման, ինչպէս նաեւ պարտաւորուած է վճարել տուգանք 6000 թրքական լիրայի (շուրջ 1500 ԱՄՆ տոլար) չափով: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»-ը, այս մասին յայտնած է թրքական «Հուրրիյէթ» պարբերականը:*

*Ճեմալի դէմ մեղադրանք ներկայացուած էր ամիսներ առաջ, սակայն դատարանը անոր արդարացուցած էր:*

*Բողոքարկումէն ետք դատարանը նոր վճիռին մէջ որոշած է, որ Ճեմալ պարբերականներէն մէկուն մէջ հրապարակուած յօդուածին մէջ, գրելով Թուրքիոյ մէջ ահաբեկչական խմբաւորում համարուող Քիւրտական բանուորական կուսակցութեան (PKK) մասին, գովաբանած է անոնց:*

## Վիգէն Սարգսեան Այցելեց Լոս Անճելըս

Շարունակուած էջ 1-էն

*ճախի «Լասքին» հանրային կապերու դպրոցի սաներու եւ դասախօսական կազմի առջեւ Վիգէն Սարգսեան հանդէս եկաւ հանրային առաջնորդութեան մասին դասախօսութեամբ: Վիգէն Սարգսեան ներկայացուց նաեւ ղարաբաղեան հակամարտութեան, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն եւ տարածաշրջանային այլ խնդիրներու մասին Հայաստանի տեսակէտները:*

*Դասախօսութեան աւարտին ներկաները հարցեր ուղղած են նախարար Սարգսեանին:*

*Նոյն օրը Վիգէն Սարգսեան հանդիպում ունեցաւ նաեւ Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիք Կարսեթթիի հետ:*

*Վիգէն Սարգսեանի գլխաւորած պատուիրակութիւնը մեկնեցաւ Գանատա. մասնակցելու համար Վանքուվըրի մէջ կայանալիք ՄԱԿ-ի խաղաղարար համաժողովին:*

www.massisweekly.com

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# ԱՄԵՐԻԿԱՑԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՄԻԱՆԱԼ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆԻՆ

*«Բերքառատ Արցախ. այս խորագիրն է կրում «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի այս տարուայ Հեռուստամարաթոնը: Մարաթոնը, որն անցկացուելու է Նոյեմբերի 23-ին, նպատակաուղղուած է Արցախում հորերի հորատմանը, նոր ոռոգման ցանցի կառուցմանը եւ արեւային էներգայի կայանների տեղադրմանը:*

*Ինչպէս ամէն տարի, այս անգամ էլ Մարաթոնից առաջ բազմաթիւ անուանի գործիչներ, ուղերձներ են հրապարակում՝ կոչ անելով միանալ Մարաթոնին, հանգանակութիւններ կատարել Հայաստանի եւ Արցախի բարեկեցութեան համար:*

*Այս տարի իրենց յատուկ կոչերով հանդէս են եկել Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիկ Գարսեթին, ԱՄՆ-ի կոնգրեսականներ Ադամ Շիֆը եւ Թուլսի Գաբարդը:*

*Լոս Անճելոսի քաղաքապետը դիմել է իր համաքաղաքացիներին՝*



*Հիմնադրամին հանգանակութիւն անելու կոչով. «Այսօր փոքր աջակցութիւն ցուցաբերելով՝ դուք ապագայի մեծ փոփոխութիւնների երաշխաւորն էք դառնում»:*

*Կոնգրեսական Թուլսի Գաբարդը նշել է, որ իր գործունէութեան 25 տարիների ընթացքում Հիմնադրամը 350 մլն ԱՄՆ տոլարի ծրագրեր է իրականացրել Հայաստանում եւ Արցախում: «Հիմնադրամի իւրաքանչիւր ներդրման շնորհիւ*

*Հայաստանի եւ Արցախի տնտեսութիւնը բարգաւաճում է, բացւում են աշխատատեղեր:*

*Շնորհակալ եմ, որ այս մեծ ծրագրի մի մասն էք»:*

*Կոնգրեսական Ադամ Շիֆն իր ելոյթում ասել է. «Այս տարուայ Մարաթոնը կը հեշտացնի եւ աւելի բարեկեցիկ կը դարձնի արցախցու*



*կեանքը: Եկէք աջակցենք մեր եղբայրներին եւ քոյրերին Արցախում՝ միանալով Մարաթոնին»:*

*Հեռուստամարաթոնն ամէն տարի իրականացվում է ԱՄՆ-ի Լոս Անճելոս քաղաքում: Գործունէութեան 25 տարիների ընթացքում Հիմնադրամը մօտ 700000 նուիրատուների շնորհիւ աւելի քան*



*50000 ծրագիր է իրականացրել Հայաստանում եւ Արցախում՝ աւելի քան 350 միլիոն ԱՄՆ տոլար արժողութեամբ: Կառուցուել, վերակառուցուել եւ իրականացուել են աւելի քան 605 կմ ճանապարհ, 580 կմ ջրագիծ ու ջրատար, 149 կմ գազամուղ, 70 կմ էլեկտրագիծ, 359 դպրոց եւ մանկապարտէզ, 24 համայնքային կեդրոն, 500 տուն եւ բնակարան, 75 առողջապահական հաստատութիւն, 58 մշակութային ու սպորտային կեդրոն, 100 ջերմոց, 169 կրթական, մշակութային ու գիտական ծրագրեր:*

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամ

********

*https://www.facebook.com/HayastanAllArmenianFund/*

*(այս յղումով կը տեսնէք պաշտօնական էջում տեսաուղերձները)*

# ՈՒՂԵՐՁ՝ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

*Այս օրերին Հայաստան Հիմնադրամը մեծ ոգեւորութեամբ պատրաստւում է Նոյեմբերի 23-ին կայանալիք Գոհաբանութեան Օրուայ իր աւանդական Թելեթոնին, նպատակ ունենալով համայն աշխարհի հայութիւնը ի մի բերել՝ իրականացնելու համար Արցախի տնտեսութեան համար հսկայական նշանակութիւն ունեցող գիւղատնտեսական զարգացման մի աննախադէպ ծրագիր:*

*Իրազեկ ենք այն փաստին, որ Հիմնադրամը, իր սկսած օրուանից համախմբելով աշխարհի բոլոր ծայրամասերում բնակուող հայերին, փորձել եւ փորձում է վերականգնել եւ հզօրացնել Հայաստանի ու Արցախի տնտեսութունը: Հանդիսանալով մեր օրերի համահայկական համագործակցութեան ամենակարեւոր օղակը, Հիմնադրամը իր առջեւ առաջնահերթ խնդիր է դրել այս օրհասական պահին, ինչպէս նախկինում, ձեռք մեկնել Արցախի տնտեսական զարգացման գործին, ամրապնդել հայրենի ժողովրդի բարեկեցութիւնը: Այսօր Հիմնադրամի նորագոյն գլխաւոր նախաձեռնութիւնը, «Բերքառատ Արցախ» խորագրով, նպատակադրում է նորոգել ու ստեղծել բազմաթիւ ոռոգման ենթակառուցուածքներ՝ 250,000 արտավար (acre) հողի ոռոգմամբ ու մշակմամբ Արցախի գիւղատնտեսութիւնը հսկայածաւալօրէն զարգացնելու եւ ըստ այնմ Արցախցիների կենսամակարդակը բարձրացնելու հեռանկարով: Ծրագիրն ընդգրկում է խորքային հորերի հորատումը, ջրագծերի, պոմպակայանների, զտման համակարգերի եւ ելեկտրական գծերի կառուցումը, եւ կաթիլային ոռոգման համակարգերի ստեղծումը:*

*Հայրենակիցներ, մենք բոլորս միասին մի ուժ դարձած՝ պէտք է սատար կանգնենք Արցախի համար խիստ անհրաժեշտ այս ծրագրի իրագործմանը: Լինելով հայ, եւ գիտակցելով մեր պատասխանատուութեանը, չենք կարող անտարբեր լինել հայրենիքի վաղուայ օրուան հանդէպ: Շատ վաղուց չէր… եւ մենք լաւ գիտենք, որ «խորթացման սառոյցը» կոտրուեց երբ հարցը եկաւ Արցախի լինել թէ չլինելուն: Մայր հայրենիքը եւ Սփիւռքը՝ մի բռունցք դարձած, թեւ ու թիկունք կանգնած, ազատագրեցին Արցախը թշնամուց:*

*Մենք չենք կարող եւ չենք ուզում քարոզներ կարդալով ընդառաջ գնալ: Մենք պարզապէս կանգնած ենք իրականացուած փաստի առաջ – ունենք Արցախ: Ազգային շարժումից ծնուած եւ ազերիներից մազապուրծ փրկուած այս հողը պէտք է իսկապէս բերքառատ դարձնենք, շարունակենք զարգացնել եւ հզօրացնել մեր սուրբ հողը՝ Արցախը:*



*Իմ համայնքին յորդորս է՝ առատաձեռնօրէն սատար հանդիսանալ եւ զօրավիգ կանգնել այս նախաձեռնութեանը: Մենք այլ ընտրանք չունենք, եւ եկէք փորձենք հեռու մնալ ինչ-ինչ սխալ պատկերացումներից: Մեր յոյսն ու յենարանը մենք ենք: Եթէ ուժեղ ենք, ստեղծարար եւ գիտակից, կարող ենք չվարանել մեր գոյութեամբ որպէս ազգ եւ երկիր:*

*Ես չէ միայն, որ պէտք է ասեմ՝ Արցախը զարկերակն է մեր հայրենիքի: Միահամուռ ուժերով փորձենք ամրապնդել արդարութեան, յաղթանակի յոյսը եւ հաւատքով ներշնչուենք դէպի մեր Արցախի ապագան: Հայութիւնը դարերի խորքից եկած, երբեմն բզկտուած եւ նոյնիսկ մազապուրծ վերապրած մի ազգ է, որին ոչ մի ուժ չի կարող ոչնչացնել: Պատմութեան հնոցից կոփուած Հայաստանն ու Արցախը կան ու կը մնան:*

*Հայը հայ է ամէնուրեք: Ուրեմն եկէք թիկունք կանգնենք այս ազնուագոյն գաղափարին՝ Արցախի գիւղատնտեսական բովանդակ զարգացման գործին, քանզի թուլանալը մեզ յարիր չէ: Վերջապէս ի՞նչ ենք ուզում թողնել կամ հաղորդել մեր յաջորդ սերունդներին: Այսօր այս է մեզ բաժին հասել պատմութիւնից, եւ այն պէտք է պատուով, յաղթանակով, ստեղծարար ձեռքբերումներով եւ հզօրութեամբ փոխանցենք մեր զաւակներին, մեր փայլուն, լաւատես ու լուսաւոր գալիք սերունդներին:*

Կարինէ Խաչատրեան
Կլենտէյլ Ադւենտիստ
բժշկական կեդրոնի Վերահսկիչ



## ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
# ԱԼԻՆ ՏՕՆԻԿԵԱՆԻ «ՍՐՏԷՍ ԲԽԱԾՆԵՐ» ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԵՁՕՆԸ



Կիրակի, Նոյեմբեր 5, 2017ին, Պոլսահայ Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիւօղլու» սրահը լի էր գրասէր եւ ընթերցասէր հասարակութեամբ մը, որոնք ներկայ էին «ՍՐՏԷՍ ԲԽԱԾՆԵՐ» գրքի գինեձօնին, որուն հեղինակն էր Միութեան երկար տարիներու գործօն անդամուհի, Էսայեան Սանուց եւ Մշակութային Յանձնախումբերու նախկին ատենապետուհի՝ Տկ. Ալին Տօնիկեան:

Ձեռնարկը տեղի ունեցաւ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի նախաձեռնութեամբ:

Ձեռնարկին բացումը եւ հանդիսավարութիւնը կատարեց Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան:

Ապա բեմ հրաւիրուեցաւ հեղինակին զաւակը՝ Պրն. Յակոբ Տօնիկեան որ անգլերէն լեզուով արտայայտուեցաւ իր մօր մասին իբրեւ դրական անձ մը որ տեղ գրաւած է իր մտքին մէջ, ըլլալով միշտ սիրալիր, հոգատար եւ անսակարկօրէն տուող: Ան յայտնեց թէ այսօր իր մայրը իր բարեկամբարեկամուհիներուն, ընտանիքին եւ այլ անձերուն հպած է իր բանաստեղծութիւններով, պատմութիւններով, ազնիւ խօսքերով եւ ամենաշատը՝ իր ազնիւ սրտով: Պր. Տօնիկեան նշեց թէ հպարտ է իր մօրմով եւ յայտնեց թէ սոյն հատորը կատարելագործում մըն է, որուն պիտի յաջորդէ ուրիշներ:

Ամպիոն հրաւիրուեցաւ Պոլսահայ Միութեան Ընդհանուր Ժողովի ատենապետին կողակիցը՝ Տկ. Հիլտա Աճըլեան, որ նախ հակիրճ տեղեկութիւն տուաւ իր եւ հեղինակին միջեւ եղած սրտի մօտիկ յարաբերութեան, ուսանողական օրերուն, բեմընկերութեան մասին, ասմունքի գծով, թատերական ներկայացումներով իրենց անցուցած տարիներուն, դրուատելով Ալինի քաղցրութիւնը, գաղտնապահութիւնը, հարցերը դրական ձեւով դիտելու կեցուածքը: Տկն. Աճըլեան շնորհակալութիւն յայտնեց հեղինակին որ առիթը ընծայուեցաւ իրեն գրքին մասին խօսելու: Ապա հրաշալիօրէն ընթերցեց հեղինակին կողմէ գրուած երեք բանաստեղծութիւններ՝ «Պարգեւ», «Աղօթք» եւ «Տէմիրն»:

Գեղարուեստական բաժնով բեմ բարձրացան հեղինակին թոռները՝ Damien (Արա) կիթառի վրայ, Diego (Սեւակ) մեներգ, եւ Drake (Յակոբ) ճէզի վրայ: Անոնք բեմը թնդացուցին իրենց յատուկ երգերով, երաժշտութեամբ եւ վերջաւորութեան հայերէն եղանակով մը՝ «Էրէբունի»:

Ամպիոն հրաւիրուեցաւ կրթական մշակ՝ ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի Հայերէն լեզուի եւ Հոգեբանութեան ուսուցչուհի՝ Տկն. Ռոզալին Մատոյեան, որ խօսեցաւ գրքի հրատարակման դրդապատճառներուն, հեղինակին տաղանդաւոր եւ խոր զգացումներով համակուած ըլլալուն եւ անոր սրտէն բխածներուն մասին, նմանցնելով զանոնք գրքին խորագրին որ կը յուշէ զայն, իբրեւ անտարակոյս, խիստ եւ ինքնուրոյն ըլլալով: Ան շատ յատուկ եւ հաղորդական ոճով ներկայացուց հատորը, որ կը նկարագրէր հեղինակին կեանքին հանգրուանները, սէրը, կարօտը, տխրութիւնը, ուրախութիւնն ու յուզումը, սահուն ընթերցանութիւն մը ապահովելով կարդացողին: Տկն. Մատոյեանի խօսքը ջերմօրէն գնահատուեցաւ հանդիսականներուն կողմէ:

Մեներգի բաժինն ալ խանդավառութիւն ստեղծեց հանդիսականներուն հոգիներէն ներս՝ Գոսթա Մէսայի Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցւոյ Յակոբեան երգչախումբի անդամուհի՝ Տկ. Հիլտա Սաքարեայի «Երեւան» երգով եւ Պոլսահայ Միութեան Կեդրոնական Սանուց Յանձնախումբի ատենադպիր եւ Խաչատուրեան երգչախումբի անդամ՝ Պրն. Հրանդ Ռաքըճեանի «Աշխարհում սիրել եմ քեզ» երգով:

Խօսք առաւ նաեւ հեղինակը՝ Տկն. Ալին Տօնիկեան, որ բոլոր ներկաներուն եւ մասնակցողներուն մի առ մի շնորհակալութիւն յայտնեց, ան սրտէն բխած համբոյրներ յայտնեց իր զաւակներուն ու թոռներուն որոնք ամէն առիթով իր կողքին կ՚ըլլան հոգեկան ուժ պարգեւելով, նաեւ իր կողակցին՝ Երուանդին որ միշտ քաջալեր կը հանդիսանայ իրեն: Իր խօսքի աւարտին՝ լաւ օրերու եւ առողջութեան մաղթանքով, հեղինակը փակեց իր խօսքը:

Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի կողմէ Ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան հեղինակին յանձնեց յուշանուէր մը, առ ի գնահատանք իր նորատիպ հատորին:

Հուսկ բանքով՝ ամպիոն հրաւիրուեցաւ Հայաստան-Գուգարաց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Սեպուհ Ս. Արք. Չուլճեան, որ սոյն երեկոն որակեց ասմունքի եւ մշակոյթի երեկոյ, հաճելի ըլլալով լսել Միութեան մէջ արեւմտահայերէնը:

Շար.ը էջ 19

# ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՄԼԵԱՆ ԹԱԹԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ 6ՐԴ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ




Շաբաթ, 21 Հոկտեմբեր 2017ին տեղի ունեցաւ Հայ Աւետարանական Շամլեան Թաթիկեան վարժարանին Լոս Անճելըսի Շրջանաւարտից Միութեան տարեկան 6րդ ճաշկերոյթը՝ Կլենտէյլի Ֆինիսիա ճաշարանին մէջ: Ներկայ էին շուրջ 120 անձեր՝ շրջանաւարտներ, վարժարանին բարեկամները, ինչպէս նաեւ վարժարանին տնօրէնուհին՝ Պէյրութէն:

Մինաս Ֆուռնուզեանի բարի կոյթին երգի եւ երաժշտութեան ճոխ բաժինը ապահովեց, Նիւ Եորքէն, Մարտիկ Յովհաննէսեանը:

Ատենապետ Տիար Ջաւէն Հանէսեանի խօսքէն ետք Շրջանաւարտից Միութիւնը պատուեց Բժշկ. Կարօ Խաչիկեանը (1981ի շրջանաւարտ) Հայաստանի ու Արցախի մէջ անոր ծաւալած մարդասիրական աշխատանքներուն համար, եւ ապա՝ Վեր. Յովհաննէս ու Տիկ.



Ժանէթ Մելքոնեանները, որոնք կրթական մարզին մէջ՝ Լիբանանի հայ Աւետարանական վարժարաններուն ընդմէջէն, մեծ վաստակ ունեցած են (Տիկ. Ժանէթ Մելքոնեան պաշտօնավարած է նաեւ Շամլեան Թաթիկեան վարժարանին մէջ):

Բարի գալուստի խօսքէն ետք օրուան հանդիսավարուհին՝ Տիկ. Ազնիւ Ատամեանը, հրաւիրեց Վեր. Յովհաննէս Մելքոնեանը՝ բացման աղօթքին համար: Ապա վարժարանին տնօրէնուհին երախտագիտական խօսք ուղղեց վարժարանին գոյատեւման եւ վերելքին համար անխոնջ կերպով աշխատող եւ նեցուկ կանգնողներուն եւ նշեց թէ վարժարանին ապագան կախեալ է յատկապէս նուիրատուներուն առատաձեռնութենէն:

Գեղարուեստական բաժինով՝ Փաթիլ եւ Սինթիա Ալպարեանները ձեռնհասօրէն ներկայացուցին հայկական պար մը, իսկ ամբողջ երե-

Երեկոն աւարտեցաւ հաճելի մթնոլորտի մէջ: Վարձքը կատար Հայ Աւետարանական Շամլեան Թաթիկեան վարժարանին Լոս Անճելըսի Շրջանաւարտից Միութեան մէկն մի անդամին եւ բոլոր նուիրատուներուն, որոնց ջանքերով այս ձեռնարկը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ:

Ներկայ մը



# Ն.Ս.Օ.Տ.Տ ԳԱՐԵԳԻՆ Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Այցը եւ Պատգամը Յովսէփեան Վարժարանի Աշակերտներուն



Զորեքշաբթի, 1 Նոյեմբերի առաւօտեան ժամը 10-ին Յովսէփեան վարժարանի աշակերտները մէկտեղուած էին Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ ընդունելու եւ օրհնութիւնը ստանալու Գարեգին Բ.Ամենայն Հայոց Կաթողիկոսի: «Քրիստոս Ի Մէջ Մեզ Յայտնեցաւ» շարականի երգեցողութեամբ եւ աշակերտներու ջերմ ընդունելութեամբ Վեհափառ Հայրապետը մուտք գործեց Ս.Գրիգոր լուսաւորիչի Տաճարը:

Արժանապատիւ քահանայ Տէր Սարգիս Բրթոյեան բարի գալուստ մաղթեց վեհափառ հայրապետին ու իր հոգեւորական կեանքի հանգրուաններէն մին յիշեցնող նկար մը նուիրելով շնորհակալութիւն յայտնեց ու բարի կեցութիւն մաղթեց Հիւսիսային Ամերիկայի այցելութեան առթիւ:

Վարժարանի տնօրէն Պրն. Շահէ Մանկրեան իր խօսքին մէջ յայտնեց իր անսահման ուրախութիւնը եւ փոխանցեց աշակերտներու ուրախութեան ու հպարտանքի զգացումները վեհափառ հօր Յովսէփեան վարժարանէն ներս ներկայութեան ու պատմական այցելութեան առթիւ: Վեհափառ Հայրապետը ողջունեց աշակերտները ու իր պատգամն ու օրհնութիւնը ուղղելով անոնց ըսաւ:

«Սիրելի աշակերտներ

Շատ ուրախ եմ այսօր եւ փառք կու տամ Աստուծոյ, որ վերստին ձեր հետ եմ: Բոլորդ ուրախ պէտք է ըլլաք այսօր, որովհետեւ կը գտնուիք հոս՝ եկեղեցւոյ մէջ Աստուծոյ ներկայութեան ու Աստուծոյ հովանիին ներքոյ:

«Աւետարանին մէջ յստակօրէն նշուած է թէ, Աստուած կը սիրէ փոքրիկները եւ կ'ըսէ «Ոչ ոք չարգիլէ փոքրիկները որ քովս գան»: Ապա, Վեհափառ Հայրապետը նշելով հայ դպրոցի դերն ու անհրաժեշտութիւնը հայ մանուկի ազգային նկարագիր կազմելու ու հայապահպանման սրբազան առաքելութեան մէջ, գնահատեց սփիւռքի մէջ գտնուող հայ դպրոցներու ու հոգեւոր նուիրեալներու աշխատանքն ու գործունէութիւնը:

«Դպրոցը մեր ազգային կեանքի մէջ այն գաւիթն է ուր մեր երեխաները գիտելիքներ ձեռք կը բերեն, ուսում կ'ստանան եւ ազգային նկարագիր կը կերտեն, որպէսզի կարենան ազգային կեանքի մէջ մուտք գործել եւ իրենց արժանաւոր գործերով զարդարել զայն:

*1930 թուականին հայրս Հալէպի մէջ բանաստեղծ և նկարիչ Բիւզանդ Թօփալեաննէն, որ իր ընկերը եղած է և որոշած Փարիզ հաստատուիլ՝ կը գնէ իր տպարանը և կը վերանուանէ Տպարան Տէր Սահակեան, որ կը գոյատեւէ մինչեւ 1949: Այդ տարին մեր ընտանիքը կը փոխադրուի Պէյրութ: Տասնեակ մը տպարաններու կողքին Տպարան Տէր Սահակեան կը գործէ մինչեւ 1975, երբ ես արդէն տասը տարիէ իվեր ստանձնած էի տպարանը:*

*Այդ թուականի կէսերուն ծայր տուաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմը, տպարանը գտնուելով քաղաքի կեդրոնական թաղամասին մէջ, կործանեցաւ: Ենթադրելով որ այս պատերազմը կրնար երկար տեւել, որոշեցի նոր գործի ձեռնարկել, կրկին տպարան հիմնել անհնարին էր, որովհետեւ մեծ ծախսեր կ՚ենթադրէր, այդպէս Պէյրութի Պուրճ Համուտ հայահոծ թաղամասին մէջ հաստատեցի Պերճ Գրատունը, մասնագիտացած առաւելաբար ընթերցասէր հասարակութիւնը հետաքրքրող գիրքերով, բառարաններով, գրենական պիտոյքներով և դաստիարակիչ խաղալիքներով:*

*Սակայն, դժբախտաբար պատերազմը կ՚երկարէր և գաղութը սկսած էր նօսրանալ, մեր հայրենակիցները սկսած էին գաղթել Մ. Նահանգներ, Գանատա, Աւստրալիա և այլ երկիրներ: Մեր յաճախորդներէն մէկ մասը փոխադրուած ըլլալով Լոս Անճելըս, ես ալ 1987-ին Պերճ Գրատունը հաստատեցի, սկիզբը՝ Հոլիվուտ և ապա 1989-ին Կլենտէյլ, ուր կը գործէ մինչեւ այսօր:*

Հ.- Հետաքրքրական է իմանալ, թէ հայկական գրախանութ-ները ի՞նչպէս կը բաւարարուին եւ կը գոյատեւեն, երբ ոչ մէկ պետական կամ միութենական օժանդակութիւն կ՚ստանան:

*Պ.- Շատ տեղին հարցում է:*

*Երեւանէն ետք՝ այս ամենահոծ հայկական գաղութը այժմ ունի միայն 3 գրախանութ, նախապէս կային, քանի մը այլ գրախանութներ եւս, որոնք փակուեցան. անոնցմէ գլխաւորը՝ Շիրակը, քանի մը տարի առաջ:*

*Ասոնցմէ Սարդարապատը ունի միութենական հովանաւորութիւն: Ապրիլի և Շիրակի կողքին կը գործէին տպարաններ, իսկ Գրատուն Պերճ երկար տարիներէ իվեր մասնագիտացած է հրաւիրատոմսերու տպագրութեամբ, հարսանեկան, կնունքի և այլ առիթներու, այսպէս է որ կը գոյատեւեն:*

*Հոս կ՚ուզեմ փակագիծ մը բանալ և բաղդատական մը ընել: Վերջերս ձեռքս անցաւ 1925 թուականի «Ամերիկահայ Հանրագիտական Տարեգիրք»ը, ուր շատ հետաքրքրական երեւոյթ մը կը պարզուի, պարզապէս բաղդատելու համար:*

*Եղեռնէն ուղիղ տասը տարի փոքք, 1924-ին գործող հայկական գրախանութներ՝ Պոսթոն՝ 6, Ֆրեզնօ՝ 5, Նիւ-Եորք՝ 3, Ռոտ Այլընտ՝ 4, Միջիկըն՝ 1:*

*Հայկական տպարաններ՝ Նիւ-Եորք՝ 9, Պոսթոն՝ 5, Ֆրեզնօ՝ 5, Ֆիլատելֆիա՝ 3, Միջիկըն՝ 2, Ռոտ Այլընտ, Նիւ Ճըրզի՝ 1-ական:*

Հ.- Եկեղեցւոյ, դպրոցի եւ մշակութային միութիւններու կարգին գրատունն ալ մշակութային դարբնոց մըն է, ուր գրողն ու գրասէրը իրար հետ շփման մէջ մտնելով, կը ծառայեն ազգապահպանման: Դուք էք որ հայերէն գիրքը հասանելի կը դարձնէք հայ ընթերցասէր հասարակութեան: Այդ ուղղութեամբ ի՞նչ է ձեր համագործակցութեան կապը վերոյիշեալ հաստատութիւններու հետ:

*Պ.- Պէտք է ըսել որ գործնական կապ մը չկայ: Կարգ մը եկեղեցիներ փոքր կրպակ մը ունին, ուր Կիրակի օրերը կարգ մը կրօնական գիրքեր կը վաճառեն:*

*Ցաւօք սրտի, եկեղեցիները երբեմն մեր գոյութիւնն անգամ կ՚անգիտանան: Առաջնորդարաններ, գիրքեր կը հրատարակեն և մեզի իբր սպառման կեդրոն նկատի չեն առներ: Գրական երեկոներ, նոր հրատարակուած և այլ նմանօրինակ հանդիսութիւններ կը կազմակերպեն, որոնցմէ մենք երբեմն տեղեակ անգամ չենք ըլլար:*

*Դպրոցներու պարագային, հայերէնի ուսուցիչ-ուսուցչուհիները ամէն ճիգ ի գործ կը դնեն որպէսզի քաջալերեն արտադպրոցային հայերէն ընթերցանութիւնը, սակայն աւելի գործնական ըլլալու համար պէտք է կանոնաւորուի գիրքերու հայթայթումը, նշանակելով յարմար, ժամանակակից և բաւարար քանակութեամբ գիրքեր, որպէսզի չդժուարանայ ծնողներուն գործը:*

Հ.- Կրնա՞ք գաղափար մը տալ, թէ ընթերցասիրութիւնը այս օրերուն ի՞նչ պատկեր կը ներկայացնէ:

*Պ.- Ակնյայտ է որ ընթերցանութիւնը ամէն կողմ նահանջի մէջ է: Վերջին տարիներու արուեստագիտութիւնը (technology) շատ բան փոխեց, մարդիկ կապուեցան facebook-ին, i-phon-ին, you tube-ին և մէկ կողմ շպրտեցին հայերէն գիրքը, արարք մը, որ կը նպաստէ աւելի արագ այլասերման:*

*Թէեւ Հայաստանի մէջ վերջերս որոշ բարեփոխում մը նկատելի է: Մարդիկ կը վերադառնան գիրքին, գլխաւոր երկու երկու պատճառներով. Նախ կայ տաղանդաւոր երիտասարդ գրողներու փաղանգ մը և կան լաւ հրատարակչատուներ, որոնք կը քաջալերեն այս գրողները և կը հրատարակեն ու կը տարածեն իրենց գործերը, նաեւ կը տպեն օտար դասական և ժամանակակից գրողներու թարգմանութիւնները շատ ընտիր որակով: Այս է որ ընթերցողները լաւապէս կը գնահատեն:*

Հ.- Հոս, ընթերցասէր հասարակութեան նախասիրութիւնը ի՞նչ է եւ ի՞նչ պատկեր կը ներկայացնէ:

*Պ.- Ընթերցասէր հասարակութիւնը բնականաբար կը բաժնուի երկու մասի՝ արեւելահայ և արեւմտահայ: Եթէ նախապէս համեմատութիւնը 50/50 էր, հիմա 70/30 է, ի նպաստ արեւելահայ ընթերցողներուն:*

*Ընթերցողները միջին տարիքի են և գիրքերու պահանջարկն է առաւելաբար մանկական, գեղարուեստական, սուրբ գրային, բառարան, թարգմանչական եւայլն: Ընդհանրապէս պահանջուող հայ հեղինակներ՝ Յ. Թումանեան, Րաֆֆի, Պարոյր Սեւակ, Յովհ. Շիրազ, իսկ օտար գրողներ՝ Ալեքսանտր Տիւմա, Բալզակ, Պաուլու Կոէլյու եւայլն:*

Հ.- Վերջապէս, աւելցնելիք խօսք մը ունի՞ք մեր ընթերցողներուն:

*Պ.- Փափաքելի պիտի ըլլար մեր ժողովուրդը, որ ընթերցասէր ժողովուրդ եղած է, վերադառնայ ընթերցելու այդ ազնիւ սովորութեան և օրական գէթ մէկ ժամ տրամադրէ գիրք կարդալու և վայելէ այդ մտաւորական հաճոյքը: Իսկ վերջին խնդրանք մը՝ ԳԻՐՔ ՁԹԱՓԵԼ- Մի փճացնէք մեր ազգային գանձերը, եթէ ընթերցող չէք, նուիրեցէք մէկու մը կամ հաստատութեան մը:*

*Վերջերս, մենք կորուստէ փրկեցինք Լեւոն Սողոմոնեանի (Նովել) գիրքերը: Այս անունը կրնայ անծանօթ թուիլ ոմանց: Ան հեղինակ է և կամ մեկենաս աւելի քան 120 գիրքերու, այլազան նիւթերով՝ ինչպէս «Հայ Նշանաւոր Գերդաստաններ», «Երազահան», «Իմաստասիրութիւն», «Ժողովրդական Բժշկութեան Դեղատոմսեր», «Երեւանեան Մանրապատումներ», «Յան-*

Շար.ը էջ 19

## Որմազդի (Poster) մրցում

Հայախօսութիւնը խրախուսելու նպատակով, ԱՄՆ Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի Հայերէնի Վերաշխուժացման Մարմինը (ՀՎՄ), ընդարձակ քննարկումներէ եւ ուսումնասիրութիւններէ ետք, կազմած է մասնագիտական համապարփակ ծրագիր մը, որ ունի կարճ եւ երկար ժամկէտերով թիրախներ:

Ծրագիրներուն շարքին, Մարմինը որոշած է կազմակերպել որմազդի (poster) մրցում մը, նպատակ ունենալով նոր սերունդը քաջալերել հայերէն խօսելու:

Մրցումին կրնան մասնակցիլ երկրորդական վարժարանի աշակերտներ եւ համալսարանի ուսանողներ:

Նախագիծերու յանձնումի ժամկէտ է ճշդուած 26 Նոյեմբեր 2017-ը:

Ստացուած որմազդերը կը քննարկուին յատուկ յանձնախումբի մը կողմէ:

Առաջին եւ երկրորդ հանդիսացողները կը ստանան պատշաճ պարգեւներ:

Մրցումին պայմաններուն եւ մանրամասնութիւններուն ծանօթանալու համար կարելի է դիմել http://ArmenianLanguageVitality.org/Poster կայքէջին:

*Հայերէնի Վերաշխուժացման Մարմին*

*ԱՄՆ Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարան*

## ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍԸ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ



*Հոկտեմբեր է կրկին, Թարգմանչաց Տօն, Հայ գիրերու գիւտ, հայ մշակոյթ, բառերը լսելի են վարժարանիս մէջ ամէն տեղ, տեսանելի են ամէն անկիւնադարձին: Վարժարանիս շրջաբակին մէջ բարձրաձայն կը թնդայ հայ երգը , որ յանկարծ իր հետ նաեւ կը թնդացնէ խումբ մը մանուկներ, որոնք ձեռք-ձեռքի տուած, ինքնաբուխ, կը պարեն զբօսանքի պահուն, ոգեւորելով հայ ուսուցիչներու հոգիները: Հոս Մերտինեան Վարժարանն է, հոս հայրենիքը ողջ է:*

*Ամբողջ ամսուան ընթացքին զանազան ձեռնարկներով՝ Շրմըն Օքսի Մերտինեան Վարժարանի մէջ, հայ մշակոյթին նուիրուած տարբեր միջոցառումներով, վարժարանս տարի մը եւս յիշատակեց «Հայ Մշակոյթի Ամիս»ը ու հաստատեց, թէ մեր մանուկներուն հոգիներուն ու առօրիային մէկ անզատելի մասն է ան անսակարկ:*

*Հոկտեմբեր 3-ին Մերտինեանի աշակերտները անգամ մը եւս ունեցան առիթը՝*

*« Touch of Art» լուսանկարչական ընկերութեան, հայկական տոհմիկ տարազներով լուսանկարուելու:*

*Հոկտ. 11-ին ուսուցիչներու ընկերային յանձնախումբը, տնօրէնութեան եւ ուսուցչակազմին համար ճոխ սեղան մը պատրաստած էր : Ուսուցիչները հաճոյքով ճաշակեցին բրինձով ու մեղրով լեցուած համադամ Ղափաման:*

*Աշակերտներուն մօտ ընթերցանութիւնը քաջալերելու միտումով այս տարի եւս, կազմակերպուեցաւ Գիրքերու եւ Յուշանուէրներու Վաճառք ցուցահանդէսը, որ կայացաւ Հոկտեմբեր 17-20-ի միջեւ :*

*Այս տարուան իւրայատուկ նախաձեռնութիւններէն մէկն էր, School Spirit Committee-ի մրցումը՝ իւրաքանչիւր դասարանի աշակերտները հայ մշակոյթին նուիրուած նիւթով մը զարդարեցին իրենց դասարաններուն դուները: Է. Կարգի աշակերտները շահեցան մրցանակը:*

*Ուրբաթ , Հոկտեմբեր 20-ը Մերտինեանի աշակերտութեան համար "Spirit Day" էր. անոնք ազգային դրօշի գոյներով հագուած ու զարդարուած հպարտութեամբ եկած էին դպրոց: Խանդավառութիւնը անսահման էր, մանաւանդ որովհետեւ դասաւանդութիւնը մինչեւ կէսօր էր : Կէսօրին աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ եւ վարժարանիս պատկան մարմնի անդամներ միասին ճաշակեցին համեղ խորոված: Սրահին մէջ նաեւ վարժարանիս նուիրեալ Ծնողա-Ուսուցչական մարմնի կողմէ հայկական ճաշերու վաճառք կազմակերպուած էր:*

*Ժամը 2-ին բոլորը ուղղուեցան Պուլղուրճեան սրահ, վայելելու յայտագիր մը: Ծաղիկ եւ առաջին դասարաններու աշակերտները ելոյթ ունեցան խմբային երգերով, արտասանութիւններով եւ հայկական պարերով՝ նուիրուած հայ գինուորին : Ապա անոնք ներկայացուցին Մերտինեան Վարժարանի պատմականը, տեսաերիզով մը զուգորդուած:*

*Է. եւ Ը. կարգի աշակերտները ստանձնած էին հանդիսավարի դերը եւ այս օրուան համար պատրաստած էին հայ երաժիշտներու՝ Կոմիտասի, Արամ Խաչատուրեանի, Բարսեղ Կանաչեանի եւ Տիգրան Մանսուրեանի մասին տեղեկութիւններու եւ սահիկներու ցուցադրութեան փունջ մը իրենց երաժշտութեան ուսուցիչի ղեկավարութեամբ: Հարկ է նշել նաեւ թէ սրահի պատերը կը զարդարէին տարբեր դասարաններու մէջ կատարուած աշխատանքներու որմազդներն ու արուեստի գործերը:*

*Հանդէսի աւարտին Վարժարանիս տնօրէնուհին Տիկին Արսլանեան խօսք առնելով շնորհաւորեց եւ գնահատեց յայտագրին մաս կազմած աշակերտները, շնորհակալութիւն յայտնեց ուսուցիչներուն, որոնց միասնական աշխատանքի արդիւնքն էր այս հրաշալի հանդիսութիւնը:*

*Վառ մնայ հայ մշակոյթի կուռւան հանդիսացող հայ վարժարանն ու անոր մշակներու կրակը, թող թնդա՛յ հայ երգն ու խօսքը իւրաքանչիւր հայ երդիքին տակ: Փառք ու պատիւ մեր մշակոյթը կերտողներուն:*




## ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ



*Հայ Քոյրերու Վարժարանի տնօրէնութիւնն ու հայկական բաժանմունքի ուսուցչուհիները, իրենց կոչումը դարձուցած են՝ «Ապրիլ հայ մշակոյթով ապրեցնելու համար հայ մանուկն ու հայ դպրոցը հայկական շունչով ու ոգիով» անտեսելով շլացնող առօրեայի թոհուբոհը :*

*Նոյն նպատակով վարժարանէս ներս հակառակ ամէնօրեայ հայերէն բազմատեսակ ծրագիրներու, Հոկտեմբեր ամսուայ ընթացքին անոնք քիչ մը աւելի կը ճոխանան եւ կը բազմանան կը դառնան աւելի հաճելի, գործնական եւ տեսակաւոր: Հայ ուսուցիչը կը փորձէ իր հնարամտութեամբ եւ ստեղծագործ ոգիով ստեղծել նորարութիւններ եւ հետաքրքրական նոր յայտագրեր, որպէսզի հայ մանուկին ու պատանիին մէջ ներմուծէ հարենիքի սէրը, պատկանելիութեան զգացումը եւ ազգային գիտակցութիւնը, ինչպէս՝ հայկական ճաշերու ծրագիր, թատրոն, երաժշտութիւն, արտասանութիւններ, հայկական սովորութիւններու գործնական կիրարկում, հայերէն տառերու տարբերակներու գունաւորում եւ հէքիաթասացութիւն:*

*Առ այդ վարժարանիս աշակերտները Հոկտեմբեր ամսուայ ընթացքին մշակոյթի ուղղուած ծրագիրներու եւ յաւելեալ արտասանութիւններու եւ երգերու ուսուցումի կողքին ունեցան զանազան յայտագրեր ինչպէս՝ հաւաքական Ս.Պատարագ, Մշակոյթի օրուան հանդիսութիւն, Մանուկներու «Աշնանային փառատօն», նաեւ դասարանային աշխատանքներ ինչպէս՝ մշակոյթը յատկանշող զանազան ձեռայիններ, ուսումնասիրութիւններ եւ ներկայացումներ, աշակերտներու մասնակցութեամբ Հայկական ճաշերու պատրաստութիւն ինչպէս՝ նախամանկապարտէզի պատրաստած Ղաբամաները, մանկապարտէզի պատրաստած չարիկները եւ միջնակարգի աշակերտներու ճաշերը, այս հաճելի միջոցառումները աշակերտներու մօտ պիտի արմատացնեն հայկական պատկանելիութեան զգացումը:*

*25 Հոկտեմբեր 2017-ի առաւօտեան տեղի ունեցաւ աշակերտական Ս. Պատարագ օրուան պատա-*

Շար.ը էջ 19



## ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԸ

Ռ. ԿՈՐԻՒՆ

Նրանք երկուսն էին, ներգաղթից գրկուած շատ-շատերի հետ գիւղից տեղափոխուել էին Թեհրան: Նրանք գիւղում հողի մարդիկ էին, հողից հաց հանողներ, կեանքը չարքաշութեամբ ապահովող ֆէոդալական դարաշրջանում եւ առաւել հայերի օտար երկնակամարի տակ գտնուելու եւ բնիկների կողմից խտրականութիւնների ու նեղութիւնների ենթակայ, բռնագաղթեցուած հայի կեանք, որ զոհողութիւններով թէ՛ ճիգ էր անում հայութիւնը պահելու եւ թէ՛ գոյապրուստը հայթայթելու համար:

Էն օրերի Թեհրանում աշխատանք գտնելը դժուար էր, 2-րդ աշխարհամարտի առաջացրած տնտեսական վիճակը, ողբալի միլիոնաւոր մարդկային կորուստներ եւ մեծ աւերածութիւններ աշխարհում: Այդ պատերազմին երեք հարիւր հազար հայեր մեկնեցին ճակատ, սակայն շատ քչերը վերադարձան, տոկոսային հաշւով ամենաշատ զոհերն Հայաստանից էին, արժանին չգնահատուեց հայերի մարտական ուժի զոհաբերութիւնները, հայկական հողերից մի թիզ էլ չվերադարձաւ:

Նրանք՝ Սարգիսն ու Արմենակը բարեկամներ էին, անգործութիւնից ձեռբազատուած, աշխատանք էին գտել մի ճանաչուած ճաշարանում որպէս մատուցողներ: Նրանք գիւղի ծնուած սովորել էին մայրենի լեզւով եւ պարսկերէնով գրել ու կարդալ: Երկուսն էլ գիւղում էին ամուսնացել, Արմենակն ունէր երեխաներ, իսկ Սարգիսը ոչ՝ ամուլ: Նրանք վարձով տուն էին գտել մի բակում առանձին սենեակներում ապրելով: Նրանք պարբերաբար ծառայութեան էին լծւում տարբեր վայրերում հազիւ կարողանալով իրենց գոյութիւնը պաշտպանել: Վերջապէս յաջողւում է ծանօթի միջոցով այդ ճաշարանում գործի անցնել որպէս մատուցողներ, նրանք ստիպուած այս աշխատանքով տարուեցին: Աննշան հայեր էին այս գործով զբաղւում, մեծամասամբ ներգրաւուում էին արհեստների մէջ:

Ճաշարանը գտնւում էր բանուկ փողոցի անկիւնում՝ յաճախորդաշատ վայրում իր պարսիկ տնօրէնով: Նա հաւանել էր երկու հայերին լինելով բարետես եւ ներկայանալի կազմուածքով: Մի շարք կանոնների համար խօսում է նրանց հետ.

-Գիտեմ պարբերաբար ծառայել էք այս գործով, ձեր հայ լինելը ինձ վստահութիւն է ներշնչում, որ կանէք ձեր կարելին յաճախորդներին գոհացնելով, ինչպէս տեսնում էք, մեծ ճաշարան է, մեր գործը առաւօտեան ժամի տասնմէկից սկսում է մինչեւ երեկոյեան ուշ ժամի, հարկ է գարսոնները (մատուցողին գարսոն են կոչում Իրանում) կոկիկ հագնուեն՝ ածիլուած, ժպտուներես հայեացքով եւ բարեկիրթ վերաբերմունքով յաճախորդների հետ, արգելուած է որեւէ վէճ եւ խռովութիւն, առայժմ ձեզ յատկացւում է մի քանի սեղաններ կառավարելու համար, ստացուած նուէրները պահէք ձեր գանձանակում երկուսիդ միջեւ կիսելու համար, ճաշացուցակը լաւ ուսումնասիրէք, որպէսզի պատուէրի ժամանակ թերհասկացողութիւններ թոյլ չտաք, շաբաթական մէկ օր արձակ էք լինելու բացի հինգշաբթի եւ ուրբաթ օրերը:

Նրանք աշխատանքի ընդունուելուց ուրախ տուն են մեկնում կոստիւմի պատրաստութիւն տեսնելու, երկու ընկեր-բարեկամներ մտքեր են փոխանակում գործի վերաբերեալ.

-Մենք մեր գործով էնպիսի վարք ու վերաբերմունք ցուցաբերենք , որ ճաշարանի տնօրէնի մօտ հայի անունը բարձր պահենք, ինչպէս՝ ինքն է տպաւորուած հայերի մասին, նրան յուսախաբ չանենք, այլ մեր պարտաճանաչութեամբ, աշխատասիրութեամբ եւ սրտացաւութեամբ ցոյց տանք, որ հայը ինչ գործում էլ որ գտնուի՝ իր լաւագոյնն է կատարում:

Նրանք երկու օրից ճաշացուցակը լաւապէս գոց արած գործի են անցնում: Նրանք քիչ թէ շատ ծանօթ էին գործին: Տնօրէնը թաքուն նրանց պահում էր աչքի առջեւը քննելով գործելակերպը, շատ չանցած նա համոզուեց, որ իր ունեցած կարծիքը հայ գործաւորի հանդէպ դրական եւ անսխալ է: Նա իր գոհունակութիւնը նրանց յայտնելու համար իր մօտ է կանչում ասելով.

-Ձեր աշխատանքն ու արարքը գնահատում եմ, այսօրուանից ձեր սեղանների թիւը շատանալու է, նաեւ՝ վարձը, ուրեմն՝ շատանում է նաեւ ձեր եկամուտը նուէրներով: Կ՛ուզեմ մի բան հարցնել, ցանկանում եմ ճիշտը լսել.

-Խնդրեմ, համեցէք, ես կը պատասխանեմ. Արմենակն էր.

-Շատ-շատ հայեր հետեւում են տարբեր արհեստների եւ մեծ յաջողութիւնների են հասնում գրաւելով յաճախորդների վստահութիւնը եւ յարգանքը իրենց կատարած գովելի գործով եւ ճշտապահութեամբ, իսկ դուք ինչո՞ւ էք ընտրել այս գործը.

-Կեանքի պայմաններն են բերել այս գործին, դեհ մարդ ենք, ապրել կ՛ուզենք, առանց աշխատանքի ո՞նց կարելի է ապրել, աշխատանքը յաջողութիւն է բերում: Սա եւս գործ է, ունի իր կանոնները եւ օրէնքները, որոնք իւրացւում են սովորելով եւ փորձառութեամբ: Կը սիրէինք տեխնիք արհեստի հետեւել, սակայն նկատելով մեր վիճակը, բարձր տարիքը եւ ընտանիքատէր լինելը, ուշացած ենք համարում, արհեստը պէտք է պատանի տարիքից սկսել, թարմ մտքով եւ հետաքրքրասիրութեամբ, որպէսզի նրան լաւապէս տիրապետի, այդուհանդերձ գործը գործ է, միայն կատարողը պիտի սիրի եւ նուիրուած լինի, ամէն գործ որ սիրով է կատարւում, հրաշք է գործում, նմանում է շողարձակող արեւին անամպ երկնքում:

-Հիանալի, էս ինչ գեղեցիկ բացատրեցիր եւ պատասխանեցիր իմ հարցումին, Սարգիս եւ Արմենակ, դո՛ւք, ճաշարանի արժանաւոր պաշտօնեանե՛ր, ուրախ եմ ձեզանով:

Ամէն անգամ որ նրանք գանձանակը բացում էին նուէրների գումարը կիսելու համար, Սարգիսը չնչին էր վերցնում ասելով.

-Արմենակ ջա՛ն, դու երեխատէր ես, քո ծախսը շատ է, սրտանց եմ այս անում, ընդունի՛ր եւ մի՛ հակառակիր:

Նրանք մնացին հաւատարիմ իրենց գործին եւ սրտցաւ բարեկամներ արդար վաստակով բարւոք կեանք ապահովելով իրենց համար:

## ՊԱՐԷՏ ՄԱՐՈՆԵԱՆԻ «1915-Ի ԿԻՆԵՐԸ» ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱՒԷՆԸ ՑՈՒՑԱԴՐՈՒԵՑԱՒ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ




Հինգշաբթի, 26 Հոկտեմբեր 2017-ին, Հայկազեան համալսարանին մէջ ցուցադրուեցաւ Հայկազեանի շրջանաւարտ Պարէտ Մարոնեանի « 1915-ի կիները» վաւերագրական ժապաւէնը, որուն ներկայ էին մեծ թիւով ակադեմականներ, դիւանագէտներ, լրագրողներ, քաղաքական գործիչներ, հանրային դէմքեր եւ ուսանողներ:

Այս առիթով, Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փօլ Հայտօսթեան յուշանուէրով մը պարգեւատրեց Պարէտ Մարոնեանը՝ իր ժապաւէնին ընդմէջէն Հայոց Ցեղասպանութեան ընթացքին հայ կնոջ տանջանքները հարազատօրէն ներկայացնելու եւ տարածելու աշխատանքին համար: Իր խօսքին մէջ վեր. դոկտ. Փօլ Հայտօսթեան շեշտեց նման գործերու կարեւորութիւնը, որոնք լոյս կը սփռեն ոչ միայն հայ ժողովուրդին ապրած տառապանքներուն, այլեւ բոլոր ժողովուրդներուն, որոնք մինչեւ ներկայ ժամանակները կ՚ապրին նմանատիպ դժուարութիւններ:

Ցայտագիրը ներկայացուց Հայկազեան համալսարանի հանրային կապերու պատասխանատու Միրա Եարտըմեան, որ փոխանցեց Պարէտ Մարոնեանի « 1915-ի կիները» վաւերագրական ժապաւէնի հիմնական խորհուրդը՝ վեր առնել հայ կնոջ դերակատարութեան կարեւորութիւնը Հայոց Ցեղասպանութեան ժամանակաշրջանին, ինչպէս նաեւ լուսարձակի տակ առնել ամերիկացի եւ եւրոպացի կիներու կողմէ տրուած բոլոր տեսակի օժանդակութիւնները, որոնք անկիւնադարձային եղան Հայոց Ցեղասպանութենէն ետք կազմուած գաղթավայրերուն մէջ, յիշելով յատկապէս ժապաւէնին մէջ նշուած Օրորա (Արշալոյս) Մարտիկեանը, Մարի Լուիզ Կրաֆֆամը, Տիանա Աբգարը եւ Մարիա Ճէյքըպսընը:

Նշենք, որ վաւերագրական ժապաւէններու բեմադրիչ Պարէտ Մարոնեան չորս անգամ շրջանային պատկերասփիւռի «Էմմի» (Emmy) մրցանակի մրցանակակիր է, 2016-ին՝ «Արմին Վեկներ» մարդասիրական մրցանակի մրցանակակիր, ինչպէս նաեւ վերջերս ստացած է Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանի «Արուեստի եւ Գրականութեան» մրցանակը:

2006-ին հիմնած է «Արմենոյտ» խումբը, Մարոնեան հիմնականօրէն կ'արտադրէ հայկական նիւթերով վաւերագրական ժապաւէններ: Մարոնեանի «Ցեղասպանութեան Որբերը» վաւերագրական ժապաւէնը Ամերիկայի տարածքին յաջողած է հասնիլ 100 միլիոն հանդիսատեսի: Շուրջ ինիսուն վայրկեան տեւած ժապաւէնին հետեւելէ ետք ներկաները բարձր գնահատեցին Պարէտ Մարոնեանի աշխատանքը, ընկերային մթնոլորտի մը մէջ ուղղելով իրենց հարցումները:

## ԹԱԹՈՒԼ ՀԱՃԵԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ «ՔՐԻՍԹԱԼ ՍԹԱՐ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ

Նոյեմբեր 2-ին Չեխիոյ մայրաքաղաք Փրակայի մէջ, տեղի ունեցաւ Եւրոպական 13-րդ «Քրիսթալ Սթար» միջազգային երաժշտական, պարի եւ թատերական փառատօնը: Թաթուլ Հաճեանը (Կիթառ) ներկայացուց Հայաստանը, գեղարուեստական ղեկավար ունենալով Արմանտօ Ղուկասեանը: Թաթուլը վարպետօրէն կատարեց Տոմենիքօ Սքարլաթիի Սոնաթա K239 եւ Վիչէնթէ Ասենչոյի La Frisanca բարդ յօրինուածքը: Եւրոպայէն՝ Գերմանիա, Սլովենիա, Ուքրանիա, Ռուսիա, Իտալիա եւայլ երկիրներէ իրենց մասնակցութիւնը բերին թիւով 37 կատարողներ:

Հայաստանը ներկայացնող մեր մասնակիցը՝ Թաթուլ Հաճեանը, սոյն փառատօն-մրցումին դարձաւ Գաւաթակիր Grand Prix, շնորհիւ իր բարձրատաղանդ եւ հմուտ բեմական կատարողական արուեստին:

Թաթուլը ծնած է Լիբանան եւ 10 տարեկան հասակին ծնողներուն հետ հաստատուած է Հայաստան:

Երաժշտական նախակրթութիւնը ստացած է Երեւանի «Չայկովսկի»ի անուան պետական երաժշտական եւ տարրական տասնամեայ ուսումնարանին մէջ, ապա ընդունուած է Երեւանի Կոմիտասի անուան Պետական Կոնսերուաթորիան եւ քառամեայ բարձրակարգ ուսումը աւարտած է գերազանց արդիւնքով:

Թաթուլը մասնակցած է շարք մը միջազգային փառատօններու՝ Հայաստանի Թիֆլիսի, Պուլկարիոյ, եւ Փրակայի մէջ: Մենահամերգներով հանդէս եկած է Երեւանի, Արցախի եւ Լիբանանի Այնճար գիւղին մէջ եւ որպէս փայլուն կատարող մասնակցութիւնը բերած է Հայաստանի մէջ յայտնի երգահաններու ձայնագրութեանց եւ նուագակցած անոնց մենահամերգներուն:

## ՍԷՐԸ ՈՒՆԻ ԸՆԴԱՄԷՆԸ 5 ԱՍՏԻՃԱՆ, ԲԱՅՑ ՇԱՏԵՐԸ ԿԱՆԳ Կ'ԱՌՆԵՆ 3-ՐԴԻՆ ՎՐԱՅ

«Կարծես թէ ինծի համապատասխան չէր»: Այս արտայայտութիւնը մենք յաճախ կը լսենք՝ իբրեւ անսպասելի բաժանման արդարացում: Երբեմն անհասկնալի է, թէ ինչու կը չքանայ իրական սէրը: Ըստ հոգեբաններու կատարած հետազօտութիւններուն՝ մարդոց մեծ մասը, իրականութեան մէջ չի գտներ «իր» մարդը: Անոնք պարզապէս չեն դիմանար յարաբերութիւններու 5 աստիճաններուն՝ կանգ առնելով երրորդին վրայ:

1. Սիրա հար ւածութիւն: Ասի կա այն աստիճանն է, ուր մեր ուղեղը «թմրած է» երջանկութեան հորմոնով: Իսկ ձեր զուգընկերը պարզապէս իտէ ա լ ա կ ա ն մարդ է՝ առանց որեւէ թերութեան: Դուք կը կարծէք, թէ ան միշտ պիտի կատարէ ձեր բոլոր ցանկութիւնները, կը հաւատաք անոր ըսած իւրաքանչիւր բա ռին եւ կ'երազէք յաւերժ սիրոյ մասին՝ ըստ էութեան մերժելով բոլորին կասկածները:

2. Յարաբերութիւններու օրինական սկիզբը: Այս շրջանին սէրը աւելի ուժեղ կը դառնայ, եւ հանդիպումներուն կը փոխարինէ համատեղ ապրուստը: Իրարու աւելի լաւ կը ճանչնաք, կը սկսիք ազդեցութիւն ունենալ զուգընկերոջ կեանքի բոլոր ոլորտներուն վրայ: Ասիկա միաւորման եւ ուրախութեան ժամանակ է: Այս շրջանին հնարաւոր է երկար սպասուած երեխաներու ծնունդ, որ միայն կ'ամրացնէ կապերը: Դուք ձեզ պաշտպանուած, ցանկալի կը զգաք: Կ'ենթադրէք, որ իսկապէս գտած էք «ձեր» մարդը, որ ատիկա ճակատագիր է, եւ, որ երբեք չէք կասկածիր այդ կէտին:

3. Հիասթափութիւն: Այս շրջանին կը փլին բոլոր յոյսերը: Կ'առաջանայ զգացողութիւն, թէ զգացումները անվերադարձ կը մարին, զուգընկերը կը դառնայ պարզապէս կանխատեսելի, իսկ անոր վարքը կը սկսի նեղացնել: Կ'ուզէք յարաբերութիւնները ընդմիջել կամ ընդհանրապէս ընդունիլ, որ ան «ձերը» չէր: Ինչո՞ւ տանջես դուն քեզ մարդու մը հետ, որուն հետ շրջան մը լաւ էր:

4. Ճգնաժամի յաղթահարում եւ անցում մեծ սիրոյ: Եթէ դուք աչքերը փակ համոզուածութեամբ կ'անցնիք երրորդ շրջանը, կը ստանաք հետեւեալը՝ կը ջնջուին այն պատրանքները, որոնք արտացոլացած էք ձեր զուգընկերոջ վրայ: Ձեր առջեւ կը կանգնի ոչ թէ ան, որուն դուք կ'ուզէիք տեսնել ձեր կողքին, այլ իրական մարդը: Դուք կ'ընդունիք, իսկ, որ աւելի կարեւոր է, կը հասկնաք զուգընկերոջ թերութիւնները: Դուք կ'անցնիք, այս պէս կոչուած, մեծ սիրոյ:

5. Ձեր զուգընկերոջ իրական ուժին գիտակցումը: Հասկնա լով, որ դուք սորված էք յաղթահարել ձեր տարաձայնութիւնները եւ գտած էք ձեր յարաբերութիւններուն խորքը, ամուր կապը, կը գիտակցիք, որ երկուքդ ալ ուժ ունիք՝ աշխարհի վրայ որեւէ բան փոխելու համար: Ոչ միայն միասին ապրիլ, այլեւս երկուքով ապրիլ որեւէ ընդհանուր գործի համար: Միասին աշխատիլ գրել, ստեղծագործել... ինչ ալ ըլլայ: Եւ երբ դուք սկսիք աշխատիլ եւ մտածել՝ իբրեւ մէկ ամբողջութիւն, յաղթահարելով բոլոր շրջանները, դուք արդէն կրնաք 100 տոկոսով ըսել՝ ան «իմս է»:

## ԻՆՉՊԷ՞Ս ԴԱՌՆԱԼ ԱՒԵԼԻ ՎՃՌԱԿԱՆ ԵՒ ԻՆՔՆԱՎՍՏԱՀ

Յաճախ կը պատահի, որ շատերը դժուարութեամբ կը կայացնեն որեւէ որոշում: Ատիկա կը վերաբերի ոչ միայն համաշխարհային ընտրութիւններուն, ինչպէս, օրինակ, աշխատանքի փոփոխութիւնը, տեղափոխութիւնը, այլեւ՝ մանր, ամէնօրեայ վիճակներուն: Երբեմն, այս կամ այն որոշման ընդունումը կ'ըլլայ տանջալի եւ բարդ, իսկ պատասխանատուութիւնը ամբողջովին ձեր վրայ կ'ըլլայ: Ատիկա քիչ մը կրնայ վախցնել, որուն հետեւանքով, դուք կ'անցընէք անքուն գիշեր եւ կը մտածէք ընտրութեան դրական ու բացասական կողմերուն մասին: Երբեմն անվստահութեան եւ վախի պատճառով մենք կը յետաձգենք որոշման մը ընդունումը կամ ամէն ինչ կը ձգենք այնպէս, ինչպէս որ է:

Կարգ մը խորհուրդներ, թէ ինչպէս կայացնել կշռադատուած որոշում՝ առանց վախի զգացումի:

1.Ֆիզիքական վիճակ- Որքան ալ հասարակ չհնչէ, սակայն ուշադրութիւն դարձուցէք ձեր ֆիզիքական ինքնա զգացողութեան: Դժուար թէ յաջողիք լուրջ, ճիշդ որոշում ընդունիլ, եթէ անօթի էք կամ յոգնած: Նախեւառաջ բաւարարեցէք ձեր առաջնային պահանջները: Թարմ գլուխով աւելի դիւրին է ճիշդ մտածել:

2.Մէկ կողմ դրէք մանրուքները- Փորձեցէք ամէն ինչ դիւրացնել: Մէկ կողմ դրէք աւելորդ եւ անպիտան միտքերը՝ լուրջ որոշում ընդունելէ առաջ: Մանրուքները կը վատնեն մեր ուժերը եւ կը սպառեն մեր ուժերը:

3.Վերահսկեցէք ձեր վախերը- Երբեմն որոշումը մեզի դժուար կը թուի ապագայի եւ հետեւանքներու վախէն: Դուք պէտք է գիտակցիք, որ այս վախերուն մեծամասնութիւնը անտեղի են եւ անհիմն: Ի հարկէ գոյութիւն ունին եւ արդարացուած վախեր, սակայն ամէն պարագայի դուք պէտք է ընտրութիւն կատարէք: Վախերը յաղթահարելու համար գրեցէք զանոնք թուղթի վրայ եւ ուշադիր վերընթերցեցէք: Եթէ անոնց մէկ մասը, իրօք, արդարացուած է, կազմեցէք մանրակրկիտ գործողութիւններու ծրագիր, թէ ինչպէս ազատիլ անոնցմէ:

4.Անկեղծօրէն պատասխանեցէք դուք ձեզի՝ իրականութեան մէջ ինչ կը փափաքիք: Մարդու վճռականութեան կարեւոր նշաններէն է իր նպատակի եւ ցանկութիւններու յստակ ձեւակերպումը: Հարցուցէք դուք ձեզի՝ ինչպէ՞ս կը փափաքիք ապրիլ ձեր կեանքը: Քիչ թէ շատ պարզ պատասխանի հասնելու համար, թուղթի վրայ գրեցէք, թէ ինչ կը փափաքիք: Սկիզբը, հաւանաբար, այդքան ալ հասկանալի չըլլայ, սակայն շարունակելու պարագային, ամէն ինչ պիտի յստականայ: Օրինակ, ես կը փափաքիմ գրել: Բայց ի՞նչ կը փափաքիմ գրել: Որո՞ւ համար կը փափաքիմ գրել: Ատիկա ի՞նչ պիտի տայ ինծի, եւ այլն: Այսպիսի վարժութենէ յետոյ, դուք պիտի գիտակցիք ձեր վերջնական նպատակը, որ պիտի օգնէ ձեզի յստակ որոշում ընդունիլ:

## ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓՐԿԵԼՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Կարելի է հազարաւոր խորհուրդներ լսել ընկերուհիներէ, թէ ինչպէս կրկին վառել կրակը յարաբերութիւններու մէջ եւ կանխել բաժանումը: Սակայն, ըստ հոգեբաններու, ոչ մէկը տղամարդոցմէ լաւ կ'ըսէ ձեզի, թէ ինչպէս կարելի է ազատիլ ծագած խնդիրներէն:

Ահա տղամարդոց կարծիքը ատոր վերաբերեալ.

-5 բան, որոնք ետ կը բերեն նախկին կիրքը: Տղամարդիկ պէտք է տեսնեն, որ դուք ուրիշ մէկուն մօտ նոյնպէս հետաքրքրութիւն յառաջացուցած էք: Տղամարդոց համար, մասնաւորապէս, կարեւոր է տեսնել, որ իրենց կինը ուրիշներուն համար ալ հաճելի է: Ատիկա, մէկ խօսքով, կը հաստատէ, որ ան կատարած է ճիշդ ընտրութիւն եւ ի զուր չէ պայքարած այդ աղջկան համար: Բացի այդ, երբ տղամարդը կը հասկնայ, որ ունի հաւանական մրցակիցներ, կը վախնայ կորսնցնելէն: Այս իրավիճակին մէջ կարեւորը սահմանը չանցնիլն է եւ անոր ցոյց տալը, որ այդ բոլորէն դուք զինք ընտրած էք, որ ձեզի համար ամենալաւը ինքն է:

## ՀԱՍՈՒՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Եթէ կիներու արտաքինին հարցով տղամարդոց պահանջները տարբեր են, ուստի շատ տղամարդիկ կանացի բնաւորութենէն եւ վարքագիծէն մօտաւորապէս նոյն բանը կ'ուզեն: Զարաճճիութիւն: Տղամարդիկ իրենց էութեամբ աշխոյժ են, անոնք կը սիրեն խաղալ եւ հասնիլ իրենց ուզածին, բայց ատոր համար անոնց մշտապէս անհրաժեշտ է խթանիչ ուժ: Ցաւօք, շատ կիներ այդ մասին չեն գիտեր կամ կը մոռնան: Անոնք կրնան տղամարդու հետ խօսիլ ամէն ինչի մասին, բայց հազուադէպ կրնան աչքերով ու ժեստերով խաղալ անոր հետ կամ ալ խաղալ բառի բուն իմաստով: Համատեղ խաղերը, օրինակ, սեղանի թենիսը կամ ձիւնագնդին երբեմն աւելի շատ կը մերձեցնեն մարդիկ, քան ժամեր շարունակ անցուցած զրոյցները: Ոմանց, ի հարկէ, չի խանգարեր համատեղել զանոնք: Գրեթէ այդքան ալ օգտակար է համատեղ մարզական մրցոյթներ դիտելը, նոյնիսկ եթէ դուք տարբեր խումբերու կողմէ էք: Անկախութիւն: Շատ կիներ սխալմամբ կ'ենթադրեն, որ տղամարդոց մեծ մասը կը նախընտրէ թոյլ կիներ, որոնց համեմատ՝ իրենք զիրենք աւելի ուժեղ եւ խելացի կը զգան: Նման տղամարդիկ, ի հարկէ, կան, բայց իսկապէս յաջողակ եւ ուժեղ տղամարդիկ կը փնտռեն զուգընկերուհի, որ պիտի ոգեշնչէ զիրենք, իսկ ատիկա կրնայ ըլլալ միայն լիարժէք, վառ անհատականութիւնը, որուն համար յարաբերութիւնները կարեւոր են, սակայն կեանքի միակ նպատակը չեն: Իսկական տղամարդուն ուժեղ կինը չի վախցներ. ինքն իր մէջ բաւականաչափ ուժ ունի ուրիշի թուլութեան հաշուին իրեն աւելի ուժեղ զգալու ցանկութիւնը յաղթահարելու համար: Նման տղամարդոց չեն հետաքրքրեր կիներ, որոնք պատրաստ են յանուն յարաբերութիւններու ձգել աշխատանքը, նախասիրութիւնը, ընկերները: Այն, որ դուք անկախ էք, չի նշանակեր, որ ձեզի տղամարդ պէտք չէ: Ատիկա պարզապէս կը նշանակէ, որ դուք ձեզ լիարժէք եւ կայացած մարդ կը զգաք, եւ նման կինն է, որ կրնայ իտէալական զուգընկեր ըլլալ կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ: Ցուգական հասունութիւն: Երբ տղամարդու եւ կնոջ միջեւ յարաբերութիւններ կը սկսին, վաղ թէ ուշ անոնց միջեւ որոշ հարցերու մէջ թիւրըմբռնում կը ծագի: Եւ ատիկա բնական է: Նման իրավիճակի մէջ՝ յուզական առումով հասուն կինը՝ տղամարդը չի մեղադրեր այն բանի համար, թէ ինչ կը զգայ ինքը, այլ հանգիստ եւ բացէ ի բաց կ'արտայայտէ իր միտքերը, թէ ինչը իրեն հաճելի չէ տուեալ իրավիճակին մէջ: Առհասարակ այն, թէ ինչպէս կինը կը կառավարէ իր յոյզերը, տղամարդու համար շատ կարեւոր չափանիշ է զուգընկերուհիի ընտրութեան հարցով: Եթէ ան մշտապէս ազատութիւն կու տայ իր զգացումներուն, տղամարդու համար ատիկա ազդանշան է, որ այդ կնոջ հետ լուրջ յարաբերութիւններ չ'արժեր ստեղծել: Ինքնակառավարումը եւ խնդիրներ լուծելու ունակութիւնը՝ սառը դատողութիւնը պահպանելով հանդերձ, շատ գրաւիչ բնաւորութեան գիծ է տղամարդոց համար:

Կին, որ չի շտապեր անցնիլ մտերիմ շփման: Այսինքն մարմնական մտերմութեան: Որքան հասանելի է այդ մէկը, այնքան շատ տղամարդը կը գնահատէ կինը, որ իր տունը չ'երթար առաջին ժամադրութենէն յետոյ: Բանը ողջախոհ կին գտնելու ցանկութեան մէջ չէ, այլ այն, որ կինը նուաճելը, ծանօթութեան եւ առաջին յարաբերութեան միջեւ ինկած ժամանակահատուածին ապրած սպասումը նոյնպէս մեծ հաճոյք կը պատճառէ, եւ տղամարդը չ'ուզեր ատկէ զրկուիլ: Բացի այդ, եթէ կինը չի շտապեր յարաբերութիւն ունենալ տղամարդու հետ, ատիկա կը վկայէ այն մասին, որ ան չի ձգտիր տղամարդը իրեն կապել բոլոր հնարաւոր միջոցներով, այսինքն՝ կինը գիտէ իր գինը, եւ անոր համար ունի բոլոր հիմքերը: Կինը, որ տղամարդուն անձնական տարածք կու տայ: Տղամարդու տեսանկիւնէն իտէալական կինը անոր ժամանակ կու տայ ընկերներուն հետ պարբերաբար ժամանակ անցնելու համար (առանց իրեն), զբաղելու սեփական հետաքրքրութիւններով եւ այլն: Անգամ եթէ տղամարդը շատ կը սիրէ կինը, ան չ'ուզեր այդ կնոջ հետ անցնել իր ամբողջ ժամանակը, ամէն բան ընել միասին՝ չբաժնուելով ոչ մէկ վայրկեան: Ի հարկէ, ամէն պարագայի ան չի հրաժարիր ընկերներէն եւ հետաքրքրութիւններէն, սակայն անոր համար հաճելի պիտի ըլլայ, եթէ կինը դէմ չըլլայ ատոր:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Զօրացինք Օժանդակենք Փրկենք
www.syrianarmenianrelieffund.org
Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

## Սամբօ - Հայաստանի Ներկայացուցիչները Աշխարհի Ախոյեան



Հայաստանի ներկայացուցիչ Գրիգոր Մխիթարեանը ոսկէ մետալակիր է դարձել Սոչիում աւարտուած սամբոյի աշխարհի առաջնութիւնում:

Մարտական սամբոյի մրցաշարի 52 կգ քաշային կարգում Մխիթարեանը հասել է մինչեւ եզրափակիչ, որտեղ 7:0 հաշուով վստահ յաղթանակ է տարել Ղրղզստանը ներկայացնող Մուխամետալի Երգիշեւի նկատմամբ:

68 կգ քաշային Վաչիկ Վարդանեանը դարձել է աշխարհի փոխախոյեան: Եզրափակիչում Վարդանեանը 0:9 հաշուով պարտուել է ռուսաստանցի Դանիլ Վոեւոդինին:

Յիշեցնենք, որ նախօրէին մարզական սամբոյի մրցաշարի 52 կգ քաշային կարգում աշխարհի ախոյեան էր հռչակուել Տիգրան Կիրակոսեանը, իսկ 57 կգ քաշային Մաքսիմ Մանուկեանը եւ 100 կգ քաշային Արսէն Խանջեանը նուաճել էին պրոնզէ մետալներ:

Սամբոյի աշխարհի առաջնութեանն առաջին անգամ մասնակցեցին ռեկորդային՝ 93 երկրների շուրջ 1000 մարզիկներ: Վիճարկուեց մետալների 27 հաւաքածու: Թիմային հաշուարկում յաղթեցին ռուսները, որոնք նուաճեցին 24 մետալ (17 ոսկէ, 3 արծաթէ եւ 4 պրոնզէ): Հայաստանի թիմը մրցավայր էր մեկնել 15 սամբիստներով:

## Մոսկուայի «Արարատի» Յաղթանակն ու 13 Միաւորի Առաւելութիւնը Առաջին Տեղում

Ֆուտպոլի Ռուսաստանի երկրորդ դիւիզիոնի առաջնութեան «Կենտրոն» գօտու մրցաշարի 17-րդ տուրում Մոսկուայի «Արարատը» հիւրընկալեց Բելգորոդի «Էներգոմաշին»: Պօղոս Գալստեանի գլխաւորած թիմն առավելութեան հասաւ նուազագոյն հաշուով:

Միակ գոլը 53-րդ րոպէին խփեց Դաւիթ Դաւիդեանը: Հիւրերը 79-րդ րոպէից հանդէս էին գալիս 10 ֆուտպոլիստներով: Երկրորդ դեղին քարտի համար հեռացուեց պաշտպան Սերգեյ Բուտիրինը:

«Արարատը» 17 խաղից յետոյ մրցաշարային աղիւսակը գլխաւորում է 45 միաւորով եւ արդէն 13 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում գտնուող «Ռյազանի» նկատմամբ: Մրցաշարի յաղթողը կը նուաճի Ռուսաստանի Առաջին դիւիզիոնի ուղեգիր:

## Էդգար Ստեփանեան. Կը Փորձեմ Ամէն Ինչ Անել, որ Այս Յաջողութիւնները Լինեն Շարունակական



Զգիտեմ՝ ինչ կը դառնայի, եթէ հեծանւասպորտը չընտրէի, բայց վստահ եմ, որ սպորտում կը լինէի: Սպորտային երազանքս է նախ՝ Օլիմպիական խաղերի մասնակցութեան իրաւունք նուաճելը, յետոյ՝ օլիմպիական մետալակիր դառնալը: Առաջին երազանքս իրականացնելու ճանապարհին եմ եւ մեծ յոյս ունեմ, որ կը ստացուի:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ասաց Հայաստանի առաջատար հեծանւորդ Էդգար Ստեփանեանը, որը Վարշաւայում անցկացուած աշխարհի գաւաթի խաղարկութեան առաջին փուլում նուաճել է արծաթէ մետալ սկրէչ մրցաձեւում:

Նշենք, որ աշխարհի գաւաթի խաղարկութիւնների արդիւնքներով կ'որոշուեն 2018 թուականի Փետրուարին կայանալիք աշխարհի առաջնութեան մասնակցութեան իրաւունք նուաճած լաւագոյն 24 հեծանւորդները: Այս պահին Հայաստանի առաջատար հեծանւորդը 23-րդն է:

20-ամեայ Էդգար Ստեփանեանը երիտասարդների Եւրոպայի ախոյեան է, աշխարհի փոխախոյեան: 2017 թուականին առաջին անգամ մեծահասակների կազմում մասնակցեց Եւրոպայի առաջնութեանը եւ զբաղեցրեց 11-րդ տեղը: Իսկ աշխարհի գաւաթի խաղարկութեան առաջին փուլի արծաթէ մետալը հեծանւորդի առաջին լուրջ նուաճումն է մեծահասակներում:

NEWS.am Sport-ի թղթակցի հետ Էդգար Ստեփանեանը հանդիպեց Վարշաւայից վերադառնալուց օրեր անց, քանի որ մարզիկը Երեւանում բացօթեայ մարզումների պատճառով հասցրել էր մրսել եւ վատառողջ էր:

«Ուրախ եմ, որ այս առաջին լուրջ յաջողութիւնը մեծահասակներում բոլորին ուրախացրել է: Ես երիտասարդներում դարձել եմ Եւրոպայի ախոյեան, աշխարհի փոխախոյեան, բայց մեծահասակներում լուրջ արդիւնքն այլ է, զգացողութիւններն այլ են, մեծահասակներում պայքարը ուրիշ աշխարհ է:

Վարշաւայում երբ աւարտեցի մրցելոյս, նայեցի մարզիչիս, հասկացայ, որ ամեն ինչ հրաշալի է: Նրա ուրախութիւնը եւ դահլիճի

## ԱԱ-2018.
## Թունիսն, Մարոկկոն, Խորուաթիան եւ Շուեյցարիան Նուաճեցին Ուղեգրեր

Ֆուտպոլի Թունիսի եւ Մարոկկոյի հաւաքականները նուաճեցին 2018 թուականին Ռուսաստանում կայանալիք աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարի ուղեգրեր ափրիկեան գօտու ընտրական մրցաշարի 6-րդ տուրից յետոյ:

Թունիսի հաւաքականը 0:0 հաշուով խաղաց Լիբիայի թիմի հետ եւ A խմբում 14 միաւորով գրաւեց առաջին տեղը:

C խմբում Մարոկկոյի հաւաքականը 2:0 հաշուով յաղթեց Կոտ դ'Իվուարի թիմին եւ 12 միաւորով ապահովեց առաջին տեղը:

*********

Խորուաթիայի հաւաքականը դարձաւ Ռուսաստանում կայանալիք ֆուտպոլի 2018թ. աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարի 28-րդ մասնակիցը:

ԱԱ-2018-ի ընտրական մրցաշարի անցումային փուլի պատասխան խաղում Խորուաթիայի հաւաքականը հիւրընկալուելիս կոլագուրկ ոչ ոքի խաղաց յոյների հետ: Հանդիպումը հարուստ չէր կոլային պահերով, իսկ իրական պահեր գրեթէ չկային: Զագրեբում կայացած առաջին խաղում խորուաթները տնային յաղթանակ էին տարել 4:1 հաշուով:

*********




Շուեյցարիայի հաւաքականը նուաճեց Ռուսաստանում կայանալիք ֆուտպոլի 2018թ. աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարի ուղեգիր:

ԱԱ-2018-ի ընտրական մրցաշարի անցումային փուլի պատասխան խաղում շուեյցարացիները տանը կոլագուրկ ոչ ոքի խաղացին Հիւսիսային Իռլանդիայի հաւաքականի հետ, որին հիւրընկալուելիս յաղթել էին նուազագոյն հաշուով:

Բազելում կայացած հանդիպման առաջին խաղակեսում Շուեյցարիայի հաւաքականն ունէր նկատելի առավելութիւն եւ ստեղծեց մի քանի իրական կոլային պահեր, որոնք չօգտագործեց: Ընդմիջումից յետոյ աւելի լաւ տեսք ունէր բրիտանական թիմը, սակայն շուեյցարացիները կարողացան պահպանել ցանկալի արդիւնքը, թէեւ վերջնամասում կորցրին եւս մի քանի կոլային պահեր:

## Սեբաստիան Ֆետելը Յաղթեց Պրազիլիայի Մեծ Մրցանակում




Ֆորմուլա-1-ի Պրազիլիայի Մեծ մրցանակի յաղթողի տիտղոսը նուաճեց «Ֆերարիի» առաջատար Սեբաստիան Ֆետելը: «Մերսեդեսի» ֆինն արշաւորդ Վալտերի Բոտասը գրաւել է երկրորդ տեղը, իսկ «Ֆերարիի» ներկայացուցիչ Կիմի Ռայկոնենը գրանցել է երրորդ արդիւնքը:

Նախորդ փուլում Ֆորմուլա-1-ի ախոյեանի տիտղոսն ապահոված բրիտանացի արշաւորդ Լուիս Հեմիլթոնը («Մերսեդես») գրաւեց չորրորդ տեղը:

Մրցաշրջանի վերջին Մեծ մրցանակից առաջ բրիտանացի արշաւորդն ունի 345 միաւոր, իսկ Սեբաստիան Ֆետելը 302 միաւորով երկրորդն է: Լաւագոյն եռեակը եզրափակող Վալտերի Բոտասը հաւաքել է 280 միաւոր:

Յիշեցնենք, որ նախորդ՝ Մեքսիկայի Մեծ մրցանակում Լուիս Հեմիլթոնը չորրորդ անգամ հռչակուել էր Ֆորմուլա-1-ի աշխարհի ախոյեան:

---

ցնծութիւնը տեսնելն ամէն ինչ արժէր: Երբ օդում Հայաստանի դրօշն էր յաղթող երկրի եւ 3-րդ տեղը զբաղեցրած երկրի դրօշների հետ, հպարտութեան զգացումներ ունեցա, իսկ 3 հազար տեղանոց դահլիճը յոտնկայս ծափահարում էր:

Կը փորձեմ ամէն ինչ անել, որ այս յաջողութիւնները շարունակական լինեն»,- ասաց Էդգար Ստեփանեանը:

## ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Շարունակուած էջ 7-էն

Սրբազանը շեշտեց թէ եթէ լեզուն կորսուի, մարդն ալ կը կորսուի որովհետեւ մարդն է որ կ'արժեւորէ լեզուն: Ան նշեց թէ Պոլիսը արեւմտահայերէն լեզուի միջնաբերդն էր, հոն էր որ կը ծաղկէր ու կը զօրանար արեւմտահայերէնը որ կը մրցակցէր արեւելահայերէնին հետ եւ գերակայ էր անոր: Սրբազան Հայրը իր խօսքով հանդիսականներուն ուշադրութեանը յանձնեց սոյն եւ նմանատիպ գրքերու ճշմարիտ տեղն ու դիրքը եւ դրուատելով հեղինակին ու ներկայացնողին՝ օրհնեց անոնց իրականացուցած օգտակար աշխատանքը եւ հեղինակին գիրքը որակեց իբրեւ հոգեզաւակ, տրուած ըլլալով որ գրողի մը հոգիէն, մտքէն եւ սրտէն է որ կը բխի գիրք մը, որ ինքնին աշխարհ մըն է որ մեզի կարելիութիւնը տուաւ մուտք գործելու իր աշխարհէն ներս, տեսնելու համար թէ ի՞նչ կը մտածէ, ի՞նչ ապրումներ ունեցած է անցեալին եւ հիմա, սիրելի հեղինակ Ալին Տօնիկեանը:

Գրքի գինեձօնի գեղեցիկ արարողութիւնը կատարուեցաւ, որուն մասնակցեցան Պոլսահայ Միութեան նախկին ատենապետ՝ Տոքթ. Արթօ Իրսան Խաչերեան, նախկին ատենապետ եւ ներկայ Ընդհանուր Ժողովի ատենապետ՝ ճարտարապետ Սիմոն Աճըրլաչ եւ իր կողակիցը՝ Տկ. Հիլտա, Գերշ. Սեպուհ Արք. Չուլճեան, կրթական Մշակ՝ Տկ. Ռոզալին Մատոյեան, հանդիսավար՝ Տոքթ. Յովհաննէս Գ. Աւետիքեան, հեղինակին զաւակն ու թոռները, հեղինակը, Տկ. Հիլտա Սաքարեա եւ Պրն. Հրանդ Րաքըճեան, նաեւ, Միութեան քարտուղարուհի՝ Տկ. Մարիթ Օհանէս:

Ձեռնարկի աւարտին հեղինակը մակագրեց իր գրքերը որուն ընթացքին տեղի ունեցաւ նկարահանում եւ պատշաճ հիւրասիրութիւն:

Նշենք թէ սոյն ձեռնարկին մասնակցողներուն կենսագրականները ընթերցեց Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան, իսկ հատորին լրիւ հասոյթը նուիրուեցաւ Միութեան Մշակութային ֆոնտին:

Գրի առաւ՝ Մարիէթ Օհանէս

## ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ՓՐԿԵՑ ԻՄ ՊԱՏԻՒԸ

Շարունակուած էջ 13-էն

տուն, դու վաղուց մռացել ես մեզ, էս ո՞ր քամին է քեզ բերել մեզ մօտ:

- Ախր, ընկեր Պետրոսեան, իմ յօդուածները սովորաբար առօրէական թեմաների, մշա-կութային ձեռնարկների շուրջն են ծաւալւում, իսկ «Գարուն»-ը լուրջ ամսագիր է: Ա՜յ, հիմա, կարծում եմ բերածս նիւթը հարմար է «Գարուն»-ի համար:

- Լա՜ւ, լա՜ւ, համեստ մի ձեւանայ, ասա տեսնեմ ի՞նչ նիւթ ես բերել..., հա՜, ասեմ որ որոշ լուրեր հասել են ինձ քո անուան հետ կապուած, ի՞նչ կայ, ի՞նչ է եղել:

Ես ամենայն մանրամասնութեամբ պատմեցի ամէն ինչ՝ զանց առնելով դրամով ինձ գայթակղելու փորձի մասին:

- Ահա խնդրեմ այն յօդուածը, որի շուրջն է պտըտւում բազում ասեկոսէներ եւ այլ անպատշաճ խօսակցութիւններ,- ասացի ես ու յօդուածը մեկնեցի նրան:

Պետրոսեանը առանց մէկ բառ իսկ արտասանելու, կարդաց յօդուածը, եւ իրեն յատուկ կէս ժպիտով ասաց.

- Ամէն ինչ յստակ է եւ ճիշդ ժամանակին, ինչո՞ւ չի տպում Սուրէնը, մանաւանդ, որ ինքն է պատուիրել քեզ:

- Ինձ թւում է ահաբեկել են եւ..., եւ կամ էլ...կաշառել:

- Մի քանի վայրկեան խոր մտածմունքի մէջ ընկաւ գրողհրապարակագիրը, յետոյ նստած տեղից վեր ելաւ եւ ասաց.

- Գնա՛, հանգիստ գնա: Ես հենց «Գարուն»-ի այս համարում կը տպեմ քո յօդուածը, թէեւ համարը պատրաստ է, բայց մի նիւթ կը հանեմ եւ այս կարեւոր յօդուածը կը դնեմ: Միայն թէ որեւէ մէկին չասես, որ «Գարուն»-ը տպելու է, թէ չէ իմ հոգին էլ կը հանեն..., թող բոլորի համար անակնկալ լինի:

Ինձ ոչինչ չէր մնում անել, քան լռելեայն, առանց որեւէ խօսք ասելու, դուրս գալ տաղանդաւոր գրողի ու մեծ հայրենասէրի աշխատասենեակից:

Յօդուածը լոյս տեսաւ «Գարուն» ամսագրի 1968 թուականի Օգոստոս ամսուայ համարում՝ «Ռեստորանային երաժշտութեան շուկայում» վերնագրի տակ: Յօդուածի հրատարակումից յետոյ, պատկան մարմինները «հաշուեհարդար» տեսան Ռաբիսի մարդկան հետ: Աշխատանքից ազատուեցին Ռաբիսի տնօրէնն ու մի քանի երաժիշտներ:

Վարդգէս Պետրոսեանի հետ իմ յաջորդ հանդիպումը կայացաւ 15 տարի անց, 1982 թուականի ամռանը, երբ ես Երեւանում էի գտնւում: Այս անգամ արդէն մեր խօսակցութեան թեման արտագաղթն էր: Մեծ գրողն արդէն այն ժամանակ էր զգում երեւոյթի վտանգաւոր ու ահազնացող լինելը:

Հրաժեշտի պահին նա ինձ նուիրեց այդ թեմային նուիրուած «Հայկական էսքիզ-ներ» գրքի առաջին առանձնատիպի՝ իր մօտ եղած միակ օրինակը՝ զգայացունց մակագրութեամբ:

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՊԵՐՃ ՏԷՐ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 14-էն

ցանք և Պատիժ», «Բախտացոյց» և շատ մը այլ գրքեր, որոնք գրուած են նոր ուղղագրութեամբ: Այս նիւթերով գիրքերը Նոր Տարուան առիթով ժողովուրդին տրամադրելի են շատ աժան գիներով, քաջալերելու համար ընթերցասիրութիւնը:

Պերճ ճան, շատ շնորհակալ եմ այս հարցազրոյցին եւ այս շահեկան խորհրդակցութեան համար:

Իմ սրտագին մաղթանքն ու կոչն է, որ մշակութային մեր միութիւնները յատուկ շաբաթ մը կամ՝ օր մը նշանակեն հայ գիրքի տարածման համար՝ հայ գրախանութներու մասնակցութեամբ, մանաւանդ որ այս օրերուն հայերէնախօսութեան տարածման աշխատանք կը տարուի մեր գաղութին մէջ:

Նորանոր ամեակներ Պերճ Գրախանութին:

Հարցազրոյցը վարեց՝
ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

## ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 15-էն

րագիչն էր Կլենտէյլի Կաթողիկէ եկեղեցւոյ ժողովրդապետ՝ Հայր Բարսեղ վարդապետ Պաղտասարեան, Ս. Սեղանին կը ծառայէին Եօթերորդ դասարանի աշակերտները: Հայր Բարսեղ պատշաճ քարոզ մը տուաւ շեշտելով՝ հայ լեզուի, հայ դպրոցի եւ հայ ուսուցիչի կարեւորութիւնը, եւ բացատրեց Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի անուրանալի աշխատանքը՝ հնարելու համար Հայ գիրերը, որոնց շնորհիւ այսօր մենք կը գոյատեւենք, ապա աշակերտները հաղորդուելէ ետք հիւրասիրուեցան հայական կաթնապուրով եւ պանիր ու հացով:

Նոյն օրուան ժամը 10:30ին վարժարանի Տնօրէնութիւնը, ուսուցիչները, ծնողներն ու աշակերտները մէկտեղուած էին վարժարանի Դանիէլեան սրահէն ներս: Հանդիսութիւնը պաշտօնական ձեւով ընթացք առաւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգի երգեցողութեամբ, օրուան հանդիսավարն էր ուսուցչուհի Նորա Պուլտուգեան, որ բացման խօսքով բացատրեց կարեւորութիւնը Գիրերու Գիւտին զուգահեռ մը գծելով նոյն թուականէն հարիւր տարի առաջ տեղի ունեցած Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօնք ընդունելու Տրդատ Գ. Թագաւորի որոշումին հետ:

Հանդիսութիւնը շարունակուեցաւ օրուան պատշաճ երգերով եւ արտասանութիւններով, որոնց դաշնամուրի վրայ կ'ընկերակցէր վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեան:

Յայտագիրը ճոխ էր եւ կ'ընդգրկէր մշակոյթի տարբեր մարզերը ինչպէս՝ հեքիաթ ասացութիւն, որ կատարեցին հինգերորդ դասարանի աշակերտները, ներկայացնելով՝ Յովհաննէս Թումանեանի «Ծիտիկը»: երգարուեստի բաժնով ներկայացան նախակրթարանի աշակերտները մեկնաբանելով «Հոյ Նազան», «Արեւը թռվռով ելաւ» մենակատարութեամբ՝ Արին Քարագեանի, իսկ Հինգերորդ դասարանը մեկնաբանեց՝ «Մոկաց Հարսեր» մենակատարութեամբ՝ Սոֆի Տատիկօզեանի եւ Թաթիանա Արսլանեանի, պարարուեստի բաժնով նազանքով պարեցին առաջին դասարանի աշակերտները ներկայացնելով «Զարթօնք» պարը. Յայտագիրը կ'ընդգրկէր նաեւ ճաշի ծրագիր, որ ներկայացուեցաւ Ութերորդ դասարանի աշակերտներու կողմէ երկու խումբերով, մէկը ներկայացուց նշանաւոր «Մանթի» ճաշի պատրաստութիւնը իսկ երկրորդ խումբը ներկայացուց Գաթայի պատրաստութիւնը որոնք նաեւ ցուցադրեցին «Slide show» ի միջոցաւ:

Այս տարուան ծրագիրը նաեւ ունէր հաճելի անակնկալ մը: Հանդիսութիւնը կը հիւրընկալէր գաղութիս հանրածանօթ երաժշտագէտ եւ հայկական երաժշտական գործիքներու կատարող՝ Պրն.Արիգ Գէորգեանը, որ իր շատ հաճելի եւ մատչելի ներկայացումով թէ խանդավառեց եւ թէ փոխանցեց կարեւորն ու օգտակարը, հայ մշակոյթը պանծացնելով հայկական աւանդական երաժշտական գործիքներով նուագելով, երգելով եւ երգեցնելով աշակերտութիւնը:

Հանդիսութեան աւարտին Տնօրէնուհի՝ Քոյր Լուսիա բեմ հրաւիրեց բոլոր հայրենաւանդ ուսուցիչները եւ երաժշտութեան ուսուցչուհին, շնորհաւորեց զանոնք եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց ստանձնած պատասխանատու աշխատանքին զանոնք պատուելով ծաղկափունջերով, ապա աշակերտները Տէրունական աղօթքի երգեցողութեամբ բաժնուեցան սրահէն մինչ ութերորդ դասարանի ծնողներն ու աշակերտները ներկաները կը հիւրասիրէին պատրաստուած ճաշերով եւ խմորեղէնով:

27 Հոկտեմբեր, 2017-ի Ուրբաթ երեկոյեան տեղի ունեցաւ Մանկապարտէզի փոքրիկներուն համար «Աշնանային փառատօն»ը, որու ընթացքին մեծ թիւով փոքրիկներ իրենց ծնողներուն հետ հաճելի եւ անմոռանալի պահեր անցուցին թալինի մանկական երգերու կատարողութեամբ եւ տարբեր հաճելի զբաղումներով:

Այսպիսով անգամ մը եւս հայ մշակոյթը իր այլազան բնագաւառներով շրջագայեցաւ վարժարանիս երկնակամարին վրայ իր անմոռանալի հետքերը ձգելով հայ աշակերտին մտքին ու հոգիին մէջ, միաժամանակ արդարացնելով հայ դպրոցին ու հայ ուսուցիչին առաքելութիւնը:

Լինտա Գանտիլեան

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Սահակեանի սաներէն հանգուցեալ ՊՕՂՈՍ ՓՈԼԱՏԵԱՆի մահուան եւ քառասունքին տխուր առիթով Սահակեան Սանուց Միութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն:

Առ այդ $100 կը նուիրէն «Մասիս»ին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Ընկ. ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՒՂԱԼԵԱՆի (Լիբանան) մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Տիգրան Սարաֆեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ռուբէն Մուղալեաններուն եւ Տէր եւ Տիկ. Փօլ Մուղալեաններուն:

Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
massis2@earthlink.net

ARMENIA FUND'S 20th INTERNATIONAL THANKSGIVING DAY

# TELETHON 2017

NOVEMBER 23




LIVE BROADCAST 10AM-10PM PST

| CENTRAL CALIFORNIA | SOUTHERN CALIFORNIA | SAN FRANCISCO & BAY AREA | LAS VEGAS |
|---|---|---|---|
| KGMC OTA Ch. 43.6 and Ch. 13.1<br>Comcast Xfinity Ch. 375<br>Northland Ch. 2 and Ch. 9<br>Noor TV Ch. 31.7 | Armenian Channels<br>&<br>KVMD Network | KTSF OTA Ch. 26.1<br>DirecTV Ch. 26<br>Dish Network Ch. 26<br>Comcast Ch. 8<br>AT&T U-verse Ch. 8 | ArMount TV |

12 HOUR LIVE WEBCAST AT WWW.ARMENIAFUND.ORG

Facebook.com/ArmeniaFund Twitter.com/ArmeniaFund instagram.com/ArmeniaFund YouTube.com/ArmeniaFundUS

ArmeniaFund

VISIT & DONATE: www.ArmeniaFund.org or Call:1-800-888-8897